

2013

ՍԻՐԱՆ

ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՈ.5805.ՎԵՐԱ ՀՐԱՄԱՎԱՐԻ ԹՎԱԿԱՆ. ՏԱՅ ՀԱՅ ՊՈ.8890.ՀՐԱՄԱՎԱՐԻ



ԽՈՐ ՀՐԱՄԱՎԱՐ

Ծ. ՏԱՐԻ 1934



ՏՊԱՐԱՆ ՄՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԵՐԱԿԱՆԱԳԻՐ



ՍԻՐԱ, ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

Բ. ՏԱՐԻ - ՆԱՐ ՇՐՋԱՆ

1934 - ՆՈՅԵՄԲՐԵՐ

Թիվ 11

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՅԵՂԱԿԱՆ ՈՂՋՍՈՒԹԻՒՆ

Ամէն կենդանի էակի մէջ կայ ներքին վիճակ մը, որով մարմինները իրենց կազմին մէջ կարծես պահեստի ունեցած ոյժերով երկար ատեն կը գիմազրենց զոյութեանը սպանացող վտանգներուն:

Դիտական այս տեսութիւնը ճիշդ է՝ որքան բնախօսական նոյնքան եւ հոգեխօսական տեսակէտով։ Դիտէներու և ծերցած ծառի կոճղերուն մէջ տեսնուած են սպիտեր, վերքերու չորցած բոյներ, որոնք զործարանաւորութեան մէջ լոիկ կատարուած եւ վերջացած կեանքի եւ մահուան կոփէի հետքեր կը մատնանշեն. ու մարդիկ կը ճանչնանք ամէնքս ալ, անզրագէտ և դաստիարակութեան բարիքներուն անհաղորդ մնացած անձեր յաճախ, որոնք իրենց խառնուածքին և նկարազրին սեփական արիութեամբ, շիջուցած են իրենց մէջ յանկարծ սկսած փորձութեան բռնկումներ, կամ վանած՝ իրենց հաւատքին և բարոյականին վրայ գործուած յարձակումներ։

Անհատներու եւ համայնքներու մէջ հաւասարապէս՝ հոգեկան այդպիսի ինքնապաշտպանութեան ոյժ յուռաջայնող տարրերու ամենէն զիսաւորներէն մին է ապահովաբար ողջմասութիւնը, մարդկային անձնն ամենէն չքնաղ տռաքինութիւններէն մին, հաւատքի և համոզումի, բնազդի և բանականութեան, անդիտակցութեան և դիտակցութեան եթէ կ'ուզեք, և փորձառութեան համադրումէն բաղադրուած այն վիճակը, որ ճշգրիտ, և իր ճշգրտութեանը համար նոյն իսկ անբացատքելի իրողութիւն մըն է, այսինքն չնորհք մը՝ մարդ էակին արուած։

Մանելով զմեղ բռն հարցին տանող այս գոնէն ներս, ըսե՞նք անմիջապէս թէ մեր ազգային նկարազրին ամենէն սրտասնդիչ զիժերէն մին կազմած այդ ողջմասութեան տեսարանին առջի է որ կը գոնուինք այս պահուս ազգովին։

Եղան վերջապէս մեր մէջ մարդիկը — կը նոտրազրենք յատկապէս այս բռուր, վասնզի չենք հաւատար բնաւ թէ վարազոյրին ետին կը պահուի կուսակցութիւն մը կամ նոյն խակ որ և է խմբակցութիւն — այս՝ մարդիկը, որոնք, ազգին այնքան աղէտքներով արկածաւորուած ներկայ ճակատազրին առջի, սիրա ըրին նոր վէրք մը աւելցնելու անոր արդէն բազմախոց հոգւոյն վրայ պառակտեալ եկեղեցիի նոր հերձուած մը փորձելով մեր ազգային-կրօնական պատակտեալ եկեղեցիի նոր հերձուած մէջ. հեստեցին հայրապետական հրամաններու և տնօքինութեանց դէմ, և, իրաւամբ կարգազրկուածի անկարգութիւններով, անիրարինութեանց դէմ, և, իրաւամբ կարգազրկուածի անկարգութիւններով, անիրաւար խոռվել ճգնեցան մեր անլուր դժբախտութիւններուն մէջ մեր միակ պարար խոռվել ճգնեցան մեր անլուր դժբախտութիւններուն մէջ մեր միակ պա-

տիւն ու սփոփանքը հանդիսացած մեծագոյն սրբութիւնը, Հայաստանեաց եւ կեղեցին:

Բայց ասիկա մէկ կողմն է միայն մետալին. անոր ցաւազինօրէն տխուր երեսը: — Այսո՛, վասնզի, ինչ որ զնունակութիւն միայն կընայ պատճառել աւ մէն ազնիւ և զգաստ հայու, այն է թէ այդ հոյլ մը մարդոց հանդէպ կայ այսօր քիչով միայն պակաս լրութիւնը ազգն, որ ոչ միայն համամիտ չէ Մայր-Աթոռոյ հոգեոր բարձրագոյն իշխանութեան գէմ պարզուած կամակոր այդ կեցուածքին, այլ նաև խորապէս վշտացած է մասնաւորաբար այն քանի մը եկեղեցականներուն դէմ, որոնք, պարագլուխ անցած այդ քանդիչ շարժումնն, պղասր ջրի մէջ որսորդութեան բնազդները կը պարարեն Ամերիկայի մէջ, անորակելիօրէն տղեր խաղարիկումներով: Եւ սակայն, բացի արուեստագործուած քանի մը պարզաներէ, բարեբախտաբար հանրութիւնը չի հետեւիր իրենց, և, հապանդ Աղդին վեհին կամքին և հրամաններուն, չի ճանչնար անոնց հոգեորականի հանգամանքը և իրենց քահանայական (1) կատարողութիւնները, այսպէս, իրենց արժանիքին և արժէքին համեմատ դատելով անոնց մուշ անձն ու մռայլ դործը:

Այս է ահա մետալին միւս երեսը. անոր զեղեցիկ ու զրայիշ կողմը: Անոր վրայ է որ երեան կուզայ, յոյժ շնորհ տալաւորութեամբ մը, աղղին ցեղական ողջմառութիւնը, որ իր կեանքին և պատուոյն պաշտպան և պատապարան կանգնած լաւագոյն բարեմանութիւններէն մին է եղած ի վաղուց անտ՛:

«Ողջմառութիւնը ժողովուրդին մրտքն է». փօխանակ տրամարանութեան պողոտային, ուրիշ սովետաներն ալ կ'անցնէն երբեմն, իմաստ սաէրներէն քայլ մը միայն հեռու, անիկա յաճախ կ'ընտրէ այս թերես ստէպ գերբուկ բայց կարճ ճամբան: ողջմառութիւն. շխտակ, զործնական և արտգ դատումն է անիկա. որ խիզն ու միտքը կը լուսաւորէ միասին: Անիկ չունին մանուածոյ և մոածումը փրթելու չափ բարակցնող ուղեղները: Խակ անոնք, անհասներ կամ հաւաքականութիւններ, որոնց դատողութիւնը փորձառութեան սալին վրայ է կուանուած, իրենց բարոյականին մէջ նոյն խակ ունին անիկ առատ՝ թէկ անզզալի՝ մժերը մը, որ անոնց խմացական և նոյն խակ հոգեկան կեանքին ամենէն ամուռ խորքը կը շնորհէ:

Թէ սոուզիւ մեր ժողովուրդը ունեցած է միշտ այդ առաւելութենէն՝ կը հասկցուի հարեանցի բաղդատութեամբ ու այն միշտուներուն, զորս ուրիշ ժողովուրդներ և մերինը ունեցած են դարերու ընթացքին և գէպքերու ճակատին վրայ, իրենց ազգային ինքնապահապահութեան և ինքնապաշտպանութեան համար նոյն տաեն: — Որքա՞ն անհունօրէն ճոխ և մեծ են ինչ որ ունեցած են միւնները, քանակով և որակով միանդամայն, այսինքն իրրե թիւ, իրրե կողմ, իրրե զօրութիւն, իրրե զարդացում, ու նոյն խակ իրրե բախտ: Աւ որքա՞ն անհամեմատօրէն անշուք և աննշան եղած են ինչ որ ունեցած ենք մենք՝ սատրութեանց այդ բոլոր աստիճաններուն վրայ:

Եւ սակայն ի՞նչ է զաղանիքը որ մենք ես, երկար անցեալի մը մէջ բիւր դառնութեանց և զժուարութեանց գէմ տոկալով, ասլրած ենք եւ հասած վերջապէս ամբողջ մարդկութեան համար այնքան բախտորոշ ներկայ ըրջանին սեմը, ուր ահա ազգերու նոր արխապազոսին մէջ բարձրացած ձայն մը կ'ըսէր զեռ երէկ մեզի համար. «Ամէնքէն մահուան եւ բնախնջումի դատապարտուած այդ ազգը ահա նորէն ոտքի կ'ելլէ՝ նայուածքն ու աչքերը լուսաւոր ապազայի

մը ուղղած»։ Պատասխանը պարզ է այս հարցումին. զայն մեր պատմութիւնն իսկ կը թելագրէ մեղի. — «Վասնզի, թէկ փոքրիկ ածու մըն ենք մարդկութեան անսահման դաշտավայրին մէջ, բայց մեր մէջ ևս զործուած են մեծամեծ քաջութիւններ և առաքինութիւններ»։ Այս՝ որովհետեւ երբեք չենք քնացած մեր բախտին վրայ. որովհետեւ մեր սրաին մէջ անկորուստ պահած ենք փրկութեան «սքանչելի յոյս»ը, հաւատքի մատեանին մէջ բազում արցունքով և արեւամբ տողուած այդ մուրհակը։ Այս՝ ամէնը. բայց զերազանցապէս նաև անոր համար որ այդ ամէնուն մէջ զործուած է միշտ ողջ մտութիւնը, մարդուն մէջ աստուածային իմացականութեան ամենին աւելի նմանող այդ ձիրքը, «որուն չնորհիւ է որ կ'իրագործուի ամէն բան. առաքինութիւն, հանճար, միտք, տաղանդ, ճաշակ», և զոր անհրաժեշտ է ունենալ՝ հասկնալ և զործել կարենալու համար։

Կը հաւատանք թէ գարերէ ի վեր ազգին մէջ ապրած և ցեղին նկարագիրը ամենէն աւելի հարազատօրէն բարացուցող այդ ողջ մտութիւնն է որ այժմ սկսած է նորըն զործել՝ իր ծաղումին մէջ նոյն խոկ ոչնչացնելու համար ախտուոր այն վիճակը, որ նոր վերքի մը ժահը կը ձգտի ահա ներարկել Հայութեան որաին՝ իր սուրբ եկեղեցիին կեանքին մէջ։ Երբ կը խորհինք ցեղական այդ ողջ մտութեան վրայ, մեր ակնարկը կ'ուղղուի ոչ միայն անոնց, «որոնք ողի ի ըստին կը պայքարին ինքինքը «ազատ Հայ եկեղեցի» առձայնած հերձուածին գէմ, այլ նաև անոնց՝ զորս կը կարծենք թէ հասարակաց զգացումը յանիրաւի կը նկատէ թիկունք և զօրավիզ՝ սկսուած այդ ձախող շարժումին։ Զենք կրնար թոյլ տալ մեղի՝ խորհիլ թէ կազմակերպութեան մը մէջ, ուր այնքան ուժեղ է եղած ուղղափառ ազգասէրներու փաղանգը, գտնուին զլուխներ՝ որոնք կարենան հաշուեցնել իրենց գատումը այնքան սղտար գիտումներու հետ, և ուղեն ընդդէմ զործել ցեղին ողջ մտութեան, ական ոկեղելով՝ այդպիւ հիմերուն տակ ազգին ամենէն նուիրական հաստատութեան, Մայրենի եկեղեցիին, կամ ազդելու համար կրօնական վերին իշխանութեան վրայ, սպառնալիքի խաղ սարքել։ — Անվարան և անվերապահօրէն կ'ընենք այս յայտարարութիւնը, և ոչ թէ իրեն «Ճի բանի», կամ իրրե հասրբ ուղարիչ պատշաճութեան, և այս՝ հիմնուելով մօտէն մեր ծանօթութեան վրայ անսնցմէ ամենէն զլսաւորներուն։

Ա՛չ. սակաւաթիւ են և բոլորովին տարշեր մտայնութեան կը պատկանին եկեղեցւոյ միութեան և խաղաղութեան գէմ բունցք սեղմող խանգարիչները, հոգևորական սքեմի այծենակամէն բաժնուիլ չլրցող այդ զառնազեսանները, սակաւաւոր՝ առանց սակայն «ընտրեալներ» լինելու. իրենց անցեալով աւաղելի և իրենց աղաղայով անբարեյոյս մարդիկ, զորս Մայր Աթոռոյ տրդարութիւնը իրաւոմիր կարեց քեցեց եկեղեցւոյ Աւխտէն։

Հայ սփիւռքը, այդ ցրուած հօտը, հրամատար Հովուապետի մը պէտք ունէր. նախախնամութիւնը և բարեգէպ հանդամանքներ պարզեցին զայն իրեն՝ յանձին Արարատեան Մայր Աթոռոյ ընդհանրական Հայրապետին։ Անոր ձայնը, յանուն Աստուծոյ և Ազգին, պէտք է իշխէ կիրքերուն վրայ։

Ամէնքս՝ մի հօտ՝ պէտք է գառնանք Անո՛ր միայն, իրրե մի հովուի Մայցեալը մեղանչել է ցեղին ողջ մտութեան ողլոյն գէմ. ու զայդ պէտք չէ թոյլարք ինքինքին որ և է հայ, որ կը սիրէ իր ազգն ու եկեղեցին։

ԿՐՈՆԱԿԱՆ

ՅԻՍՈՒՏԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ԸՆՍ ՀԱՄԱՏԵՍԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Ա. ԳԼՈՒԽ

ԱՍՈՒՇՈՅ ԹԱԳԱԽՈՐՈՇԻՒՆ

Բայց երկինքը եղող այս Աստուածը ի՞նչպէս կ'իրականացնէ իր կամքը երկրի վրայի Բանի որ Յիսուս չի բաւականանար կրկնելով երայական հին բնագիրներուն պարունակութիւնը, այլ զանոնք կերպարանափոխելով կ'ընդլայնէ, որոնք են սթագաւորութեան մասին իր վարդապետութեան սկզբնատիպ տարրերը:

Նևիթին մէջ մասնելու համար, նախ յիշեցնեմ այդ բառին երկու առումները, անոր սովորական զործածութեան համեմատ:

ա) Անիկա նախ կը ցուցնէ երկրի ուրոշ տարածութիւն մը, զայն գրաւող բընակչութեան հետ միասին, այս իմաստով, պիտի ըստու, զոր օրինակ, թէ իտալիոյ թագաւորութիւնը հիւսիսէն սահման ունի Արքեան լեռները, և կը պարունակէ այսքան միլիոն բնակիչ։ Աւելորդ իսկ է ըստ թէ այս սահմանումը չի կրնար պատշաճիլ Աւետարանի թագաւորութեան անոր «երկնային» ըլլալու իրողութիւնն իսկ գեր ի վեր կը կացուցանէ զայն երկրաւոր սկզբաներէ. ի՞նչ են ուրեմն անոր յատկանշաններն ու կողմանական սկզբունքը։

բ) Բառին երկրորդ առումն մէջ, թագաւորութիւնը ոչ այլ ի՞նչ է, եթէ ոչ պետութիւն մը, իր բնակիչներուն թիւովը և սահմաններուն զիմերովը. ի՞նչպէս նաև իր քաղաքական զաղափարներուն արժեքովը և զայն վարող սահմանադրութեամբը։ Վերեւ յիշուած օրինակը առնելով, երբ կ'ըսենք թէ իտալիա թագաւորութիւն մըն է, կը հասկնանք թէ անիկա որոշ սեսակի միապետութիւն մըն է եւ ոչ թէ սակաւապետութիւն մը կամ ուամկավարական հասարակապետութիւն մը։ Աստաւծոյ թագաւորութիւնն ալ ունի⁵ իր

կաղմակերպութիւնը, եւ եթէ այս՝ ի՞նչպէս է ան։ Իսրայէլացիները կը սիրէին զայն նոյնացնել աստուածպետութեան հետ, վասնզի այդպէս կը հասկնացնելու զայն զայն ամենէն սիրած գաղափարներէն մին այն էր թէ Արքահամու զաւակները, այս թագաւորութիւնն կը պատկանէին, մինչդեռ հեթանոսները, հեթանոսներ ըւլալուն համար, զանգուածովին զուրս կը մնային անկէ։ Բայց եթէ Յովհաննէս Մըկրոտիչ հերքեր էր արդէն այդ նախապաշտարումը (Մաթ. Դ. 9), հասկնալի է թէ Յիսուս իր բոլոր ոյժովն էր որ պայքարեցաւ անոր զէմ։ Անիկա չըստու երրեք սերանի Իսրայէլացոց...», այլ՝ երանի աղքատաց հոգուով... երանի այնոցիկ որք հալուծեալք լիցեն վասն արդարութիւնն, զի այնպիսիացն է արքայութիւն երկնից» (Մաթ. Ա. 3, 10):

Աստաւծոյ թագաւորութիւնը արդարեւ ոչ մէկ երկրաւոր առաւելութենէ կախում չունի։ Արդի և ներկայացուցիչ հոգեառ թագաւորութիւնը «արքայութիւն» մըն է, աւետարաններու զործածութեան յունորէն բառին երկու առումներովն ալ, թագաւորութիւն մը՝ որ կը հիմնուի և կը մեծաց սիրաերու սրբարանին մէջ։ Հոգեւոր ըլլալուն համար է նոյնպէս՝ որ այդ կաղմակերպութիւնը լոյնօրէն տիեզերական է, և բայց է բոլոր մարդոց տոջիւ, առանց որ եւ է բացառութեան կամ ուսնձնաշնորհութեան։ Կարելի⁶ էր միթէ արտաքին և երկրաւոր խնդրանքով մը ճշգել մուտքի պայմանները կեանքի այնպիսի ոլորտի մը մէջ, ուր հոգին միայն կ'իշխէ այլամերժօրէն։ Իսրայէլ անշուշտ առաջին իրաւունքը ունի հոն մտնելու, ու իրեն, այսինքն Աստաւծոյ խոստումներուն ժառանգորդին է որ նախ կ'ուզուի չնորհաց պատգամը (Մաթ. Փ. 6)։ Բայց եթէ չխոնարհի պահանջուած պայմաններուն առջիւ, ընտրեալ ժողովուրդը պիտի զատապարտուի արդարապէս։ Անո որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին» (Մաթ. Բ. 12)։ կը յայտարարէ Յիսուս նախատեսութեամբ այսպիսի

ըմբռստութեան մը . այսինքն թէ անոնք որ կը խորհին անոր բնական ստացողներն ըլլու և անոր առաջին հրաւիրեալներն են եղած արգարե, Աստուած պիտի դատապարտէ զանօնք ճիշգէս հիմանուները, եթէ չգտունան: «Որդիքն արքայութեան ընկեցին արտաքս»... ի՞նչ աւելի սրտագրաւ քան այս հակադրութիւնը, որ անբաղատելի ուժգնութեամբ երեան կը բերէ այն անջրպետը որը Յիսուսի ուսուցումը կը ցուցնէ Հրեից դաւանած ասուածպետական իրաւունքին և թագաւորութեան ճշմարիտ զաղափարին միջւն: Սիզրունքով, անոնք միայն են անոր անդամները, որոնք սրտազինս և ասանց վերապահութեան կը հնազանդին Աստուածոյ, իրեւ իրեց թագաւորին:

Յիսուս, սակայն, այնքան լաւ կը ճանչնայ բնական մարզը, որ չի կրնար պատրանք ունենալ անոր մասին, երկնից թագաւորութիւնը, քանի որ այս աշխարհի վրայ, մարդկային պայմաններու մէջ է որ կը զարգանայ, իր տուրքը պիտի տայ մեղքին կեղծուութեանցը: Ստորդ է որ օր մը Քրիստոս զայն պիտի մաքրէ զինքը պղծող աղտերէն (Մտթ. ԺԳ. 44, 49, 50), և սակայն հիմուկ ալ, որովհետեւ քիչ չեն իր մէջ թշնամի տարրերը, թագաւորութիւնը կը բաղկանայ ոչ թէ բոլորովին անոնցմէ որոնք ճշմարիտ հպատակներն ու որդիներն են երկնաւոր Հօրը, այլ անոնցմէ որոնք կը յայտարարեն թէ իրենք այդպիսիներ են արդարե, կամ Տէրոջը պատկանելու կարծիքը տուած են իրենց մասին: Այս խառնուրդը յառաջ կուգայ այն պատրանքներէն և կեղծաւորութիւնէն՝ որոնք անխուսափելի հետեանքն են մեղքին, որ բարիին այնպէս է փարած որ, ինչպէս ըստած է Յիսուս, կարելի չէ այս աշխարհիս վրայ զատել ցորենը որոնչն: Երեսյթները այնքան պատրանքական են՝ որ ամենէն յստակատեսներն անգամ կրնան խարուիլ: միայն վերջին զատաստանն է որ պիտի կարենայ կատարել զուումի բռւն գործը: «Նման է արքայութիւն երկնից ուսւկանի արկելոյ ի ծով և յամենայն ազգաց ձկանց ժողովելոյ. զոր, իրեւ լցաւ, հանեալ ի ցամաք և նստեալ՝ ժողովեցին զրարի բարին յամանս և զիսուանն ի բաց ընկեցին» (Մտթ. ԺԳ. 28-30, 47, 48):

Այս վերջին ուսուցումը կ'առաջնորդէ զմեզ լայնելու մեր սահմանումը, ընդգըրեկելու համար հարցին ընդհանրութիւնը: Մինչև հոս ամէն ինչ պարզ եւ բնական կ'երեսի թագաւորութեան աւետարանական վարդապետութեան մէջ, այժմ մեզի կը մնայ ցուցնել յոյժ իրական գծուարութիւնները, զորս կը ներկայացնէ արգարեայս գաղափարը: Ծանօթ է թէ այս նիւթը շատ խիստ վիճաբանութեանց պատճառէ եղած մանաւանդ այս մեր ժամանակին մէջ: Հասկնալի է անշուշտ անոր յարուցած չահարզութիւնը, խնդիրը՝ արգարե՝ ոչ միայն քրիստոնէական ուսուցումին էական մէկ տարրին վրայ է, այլ մեր ժամանակի այն ձգտումին վրայ, որ ամէն բանէ տապահ ընկերային պահանջները տառջ կը քչէ, և Փրկչին խօսքերուն մէջ ուշաղրգութիւնը առարկայ կ'ուզէ ընել ամենէն աւելի սթագաւորութեանու հաւաքական — կամ այզպէս կոչուած — զաղափարը: Միայն թէ, երբ կը սկսինք մօտենալ նիւթին, զծուարութիւններ կը ցցուին ճամբուն վրայ: Նախ՝ սահմանուելք բառը միշտ նոյն իմաստը չունի Աւետարանին մէջ: Այս տեսակիտով իմաստի զանազան խմբումներ կրնան կազմուիլ: Մերթ արքայութիւնը կը նկարազըսի իրեւ ներկայ, այսպէս երբ կ'ըստի թէ անիկա մեր ժամանակին մէջ կը վերաբերի աղքատաց հոգւով» (Մտթ. Է. 3), կամ «Բառնք յափշտակեն զնա» (Մտթ. ԺԱ. 12). մերթ ապազայ առանձնաշնորհութեան մը վրայ է որ կը դառնայ հարցը, երբ Քրիստոս կը յայտարարէ, զոր օրինակ, թէ արդարները սրազմեսցին ընդ Արքահամու և ընդ Սահմակայ և ընդ Յակովու յարքայութեան երկնից» (Մտթ. Է. 11): Բառ այս ցուցմունքներուն, — անունն իսկ կը յայտնէ զայն — զերզգայական զործարանաւորութիւնն մըն է ան, որ երկնիքն կուգայ և հոն պիտի վերագունայ, և սակայն իր դերն է զարգանալ երկրի վրայ (Մտթ. ԺԳ. 24 և հետեւ.):

Ուրիշ զմուարութիւն մը, եթէ, մէկէ աւելի հատուածներու մէջ, «թագաւորութիւնը որոշ ընկերութիւն մըն է, որուն մէջ կը մտնուի և ուրկէ զուրս կ'ենուի», (Մտթ. Է. 20, ԺԱ. 3, -ԺԳ. 41), կամ իթէ հոգեսը բարիք մըն է ան, որ կ'ըն-

զուհուի հաւատքով՝ սիրտին մէջ պահանջելու համար (Մտթ. կ. 3, 10. Ղուկ. ժթ. 32), է նաև, այս վերջին ռւսումին համամատ, ընտրեալներու միայն վերապահուած գանձ մը, փառաւոր ժառանգութիւն մը (Մտթ. իշ. 34, Ղուկ. իթ. 29):

Ռւսուցումի այս բազմազանութենէն յառաջ կուգայ սակայն տիրական զաղագար մը, որ՝ էական մասերու մէջ զէթ՝ ծնունդ կուտայ համաձայնական դրսւթեան մը: Ապահովապէս, Աստուծոյ թաղաւորութիւնը, արտաքին և նիւթական չէ, ինչպէս են երկրաւոր ընկերութիւնները: Անիկա մնաչնորհը չէ նմանապէս միակ ցեղի մը, ինչպէս Խորայէլացիները կ'ենթագրին դայն: օրդիք արքայութեանը են, ըստ Յիսուսի, «Հոգուով աղքատաները, որոնք իրենց մեղքին զգացումուն կ'արտասուն և կուրծքերնին կը կոծեն» (Մտթ. ե. 3, 4. Ղուկ. ժթ. 13). Կոյնապէս պէտք է վերստին ծնիլ թագաւորութեան մէջ մանելու համար. սրէտք է ենթարկուիլ այն կերպարանափոխութեան, զոր Աւետարանը սորձու կը կոչէ (Մտթ. ժթ. 3): Ասկէ կը հատենի թէ թագաւորութիւնը ներքին և հոգեոր հանդամանք մը ունի. հոն՝ ուր սրտի այդ տրամադրութիւնը չկայ, չի կրնար զոյութիւն ունենալ թագաւորութիւն: Արդ, ներքին այս վիճակիլ Աստուծոյ մէկ պարզեն է, զոր մարդ կը ստանայ հոււտաքով. Պանձ մընէ ան, որ ընտրեալներու միայն կը պատկանի, և օրուն արժէքը անո՞նք ամենէն տւելի կը զգան, ոլ ոնք, զոյն ունենալու համար կը հրաժարին, ի հարկին, ուրիշ ամէն բանէ. գասնզի այդ երկնաւոր առանձնաշնորհութեան և երկրաւոր հարըստութեան միջև չկայ բազդատութեան ոչ մէկ եղր (Մտթ. ժթ. 14, 16):

Միւս կողմանէ ամեծազին մարդարիւտով ներկայացւած աստուծային կեանքը երկրի վրայ երբեք իր լիոււի փթթումին չի հասնիր: Ո՞չ ապաքէն Քրիստոս նախատակոծ կեանք մը ապրեցաւ Հրէից մօտ, ինք չէ՞ր որ իր աշակերտներուն հասկցուց թէ ծառան աւելի մհծ չէ քան իր տէրը: Եթէ Որդին Աստուծոյ իր մահէն ետքն է որ ընդունեցաւ իրեն արժանի վեհագունութիւնը, այս աշխարհը հաւատացեալներու համար ևս ճշմարիտ հայ-

րենիք մը չէ. հոգիին ոյժը տակաւին բռնրովին պայծառակերպած չէ անոնց էռւթիւնը. այս աշխարհի վրայ մեծազին է անոնց փառքը. երկնից մէջ միայն պիտի տիրանան անոնք թագաւորութեան լրիւ ժառանգութեան:

Արդ, որոնց պիտի ըլլան այդ զանձերը: Բոլոր վրկուածներուն, նոյն իսկ ամենէն փոքրիկին, եթէ հաւատացեալ ին (Մտթ. իշ. 21, 23, Ղուկ. ժթ. 10, 11): Ոչ ոք պիտի կարենար հետեարար վայելէլ զանոնք՝ մեկուսանալով իր կղբայրներէն: Ամէնքը միացած են Աստուծոյ հետ Յիսուսով, որ փրկիչն է: Հոս է որ իր լըրութեանը և մեծաթեանը մէջ կ'ըմբռնենք ընկերացին այն զաղափարը որ կը պարունակէ «Ըստգաւորութիւն» աւետարանական բառը: Փրկիչի զաղափարը կերպով մը, անչուշտ, հակառակ է Հրէից ազգային նախապատշառումին, և արդէն արգավիտի մասնաւորական և արտաքին վիճակի իմացում մը մերժերու համար Քրիստոս արքայութիւնը կ'ընէ հոգեոր կաու մը՝ որ հոգւոյ արամագրութիւններուն կը վերաբերի. այս կերպով կը բացարուին միր վերև յիշած աւետարանական հաւատածները, որոնք արքայութեան այս բնութիւնը կը ցուցնէն: Եւ սակայն Յիսուսով վարդապետութիւնը նոր գործարանաւորութիւնը մըն է զարձեալ որ կ'ենթազրէ: Ինչպէս բառն իսկ կը ցուցնէ, որ կը կատարէ ինչ որ նախազծուած էր միայն Բարյէլական աստուծապետութեան մէջ: Եթէ մեղաւոր աշխարհը կը մերժէ հնագանդութիւնը զոր Աստուծոյ կը պարտիւ և եթէ ատոր հետեանքը կ'ըլլայ անձքք մը՝ որ կը հարուածէ ոչ միայն մասնաւորներ այլ մարդկութիւնն ընդհանրապէս, իր կեանքի բոլոր արտայայտութիւններուն մէջ, Քրիստոս ինքը եկած է զարմանելու համար այս խանգարուած ներգանակութիւնը, միր զործունէութիւնը զրումնելու համար աստուծային հնիքով, զմեզ՝ որ մոլորած որդիներ ենք, տանելով մեր հօրը, և այսպէս ստեղծելու համար մեր ինկած ցեղին ծոցին մէջ՝ բարոյական և ֆիզիգական ամէն ծառայութենէ աղատազրուելով վըրկուածներու ժողովուրդ մը, «ազգ սուրբ» որ երկրի վրայ կը կազմուի, բայց որ երկընքի մէջ պիտի զտնէ իր վառաւոր հայ-

կատաղրին լրումը։ Այսպէս կը հաշտուին թագաւորութեան աւետարանական գաղափարին վերագրուած զանազան խմասուները։ «Թագաւորութիւնը, անշուշտ, հոգեսր բարիք մըն է, ապագայ ժառանգութեան մը զրաւականը, զոր սակայն հասարակորդաբար կը վայելեն բոլոր հաւատացեաները։ Միւս կողմէ, Մեսիային թշնամիները արտաքսուած են անկէ, իրենց ըմբոստութեան պատճառաւ։ Աստուծոյ թագաւորութիւնը պէտք է ներքին գանձ մը ըլլոյ՝ պատմական զործարանաւորութիւն մ'ըլլալու համար։ Աւետարանի նըշանաւոր խօսքին համեմատ, պէտք է «ընդունիլ զայն իրեն մանուկ մի», հոն մըտնելու համար (Մրկ. մ. 15)։

Միայն թէ, հոն մանողը ո՞վ պիտի ունենայ իրեն տէր։ Այս հարցումը նոր երկուութիւն մը յառաջ կը բերէ սուրբ զրոց հատուածներուն մեկնութեանը մէջ։ Տարակոյս չկայ թէ թագաւորութեան պետը Աստուծոյ է, հայրը որ երկնից մէջ կը թագաւորէ։ ասկէց՝ «երկնից թագաւորութիւն» և «Աստուծոյ թագաւորութիւն» բացարութիւնները, որոնց մասին խօսեցանք վերեւ։ Բայց ի՞նչ կ'ըլլոյ Յիսուս՝ իր հիմնած այս ընկերութեան մէջ, ահաւասիկ կնճռին հանգոյցը։ Եթէ Աստուծ, աներկեւանորէն, կը թագաւորէ իր ընտրեալներու ժողովին մէջ, Քրիստոս ինքն աւսկայն այդ տիտղոսն է որ կուտայ իր անձին։ Երբ զինքը կ'ամբաստանեն թէ «թագաւոր» կը կոչէ ինքզինքը, Պիղատոս կը հարցընէ իրեն թէ «Դու ես թագաւորն Հրէից» (Ղուկ. ի. 2, 3), որովհետեւ, ամէնուն խօստովանութեամբ, թագաւորական փառքը Մեսիային առանձնաշնորհումներէն մին էր (Մտթ. ի. Ա. 4, 5. Ղուկ. ժթ. 38)։ Բաց աստի, քրկիչը այդ թագաւորութիւնը ըմբռնած է բարձրագոյն և լայնազոյն իմաստով։ Իրրիւ «թագաւոր» է որ Որդին մարդոյ օր մը պիտի երեւի ամպերուն վրայ, ազգերը գատելու համար (Մտթ. ի. է. 31, 34, 40)։ Ինչպէս կ'երեւի, Յիսուս Քրիստոս, ճիշդ ինչպէս Աստուծ, թագաւոր է երկնից արքայութեան մէջ։ վասնդի սա բացորոշ է թէ այս հատուածներուն մէջ երկու ատրբեր կամ մրցորդ թագաւորութեանց վրայ չէ որ կը խօսուի։ հակառակ պարագային, քրկու-

թեան զործարանաւորութիւնը պիտի եղած ըլլար այսնձն իւր բաժանեալը թագուուրութիւն մը, մօտ իր կործանումին (հմմտ. Մտթ ժթ. 25)։ Ի՞նչ եղրակացնել ուրեմն Փրկչին այս մասին ուսուցումը հակասական է ուրեմն։ Կը յիշեցնեմ այս առթիւթէ, Խորայէլական աստուծապետութեան մէջ, ժողովսւրպին վեհոգոյն թագաւորը, Եհովան, երկրի վրայ իրեն ներկայացուցիչ ունէր Օծեալը (հմմտ. Սղմ. Բ. 4-9)։ Հընորհաց տնտեսութեան մէջ ալ նոյնը պիտի ըլլայ, սա տարբերութեամբ միայն որ հոսնմարիտ Մեսիային վրայ է խնդիրը, որ միակ արժանաւորն է այդ տիտղոսին թեւագրած բոլոր ակնածութիւններուն, քանի որ ինքն իսկ կ'ըսէ իրեն համար։ Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ, եւ ոչ ոք ճանաչէ զմրդին եթէ ոչ Հայր, եւ ոչ զՀայր ոք ճանաչէ եթէ ոչ Արդին, եւ ում Որդին կամիցից յայտնել (Մտթ. ժթ. 27)։

(Շարունակիլի)

Ժ. Պ.

ԽՈՐՃՈՒԹՅՈՒՆԻ ԽՈՍՎ

Ավենակարոր նպատակը զոր սրացեինք առաջարկել մեր կնանքին համար, մեր հոգիին ազնուացումն է։ ուրիշ բառերով, մեր իմացական և բարոյական կարողութիւններուն յառաջիմուրիւնը։ օր լայ օրէ աւելի պայծառութիւն դնել միտին մէջ, օր լայ օրէ ինքողին աւելի ազատ ու բարացոյն զգալ։

*

Կեանելը վայրկեան մ'կ միայն, բայց այդ վայրկեանը բառական է յահիսենական բաներու ձևանակելու համար։ կը սիալին իրեւ պահանջերով այն բանը զոր յի կրնաւ տալ, վասն զի յունի, և ւողութիւնը։ բայց կարծերով քե ան պիտի տեսէ, մինչ այս մինչ այն, կը խորհինին, կը զործենի, կը սիրենի։ եւ ահա այս իսկ է մարդն ինչնին։

*

Ով որ իր եսին ազնիւ կեանին մը յիշակալը կը բողու, անսպասելի բարիին աղրիւր մը կը բողու ապագայ սերունդին։

ԲԱՆԱՏԵՂԾԱԿԱՆ

ԳԵՐԵԶՄԱՆԻԴ ԱՌՁԵՒ



Ու կը նիրնես, մեծ օրէն վերջ, այս լուս ժրմի
Թիւերուն տակ.

Մեր բաժնըրած հրնադարեան փառքերուն մէջ,
Դուն հանանչ մը անչէջ փառքին՝
Պրիսմակուած մեր հինաւուց
Սնմահներէն :

Դուն Մեսրոպէն պատկեր անմեն,
Մեծ Պարքեւի հանճարը պերն,
Աստուածախոս Նարեկացւոյն յո՛յզը նրդեն,
Խիղճն ադամանդ Շնորհալւոյն :
Ներհուն դպիր սուրբ մատեանին,
Ռոկեդարու ջինջ արձագանգ .
Որ զահընկէց մեր օրերու իմաստուրեան ըսպասին մէջ՝
Եղար արի՝ եւ անճահանչ,
Ու փայէցա՛ր խաւարին դէմ
Եօթնաստեղեան ջանի մը պէս :

Խաղաղուրեա՛ն դուն ծիրանի առամեալ,
Շունչըդ բարի, բարի անձեւ
Սա ծփանուդ յարկին վրայ .
Փորորկէն վերջ :

Նման հուրմին, իր աստոծոյն նրայրին մէջ,
Դուն վառեցիր կայծն հինաւուց աւրուանին ,
Սաղիմական այս բարձունքին :
Եւ դուն եկա՛ր խաղաղուրեան
Շունչի մը պէս,
Ծիածանուիլ այս սուրբ յարկի
Երկինքին մէջ,
Ծաւալելով սարավսարհիլ
Խունկն հոգիիդ :

Ասուերներն իսկ այս սուրբ յարկին ,
Երենց խոժոռ նկարներէն, բաղցրահայեա՛ց, ու ժրափիսով,
Ողջունեցին բու զալուսըդ շնորհարեր .
Խաղաղուրին
Էջաւ անձէդ :

Ու ծաղկեցաւ եղբայրութեան մորն ձիրենին
Շունչիդ ներեւ նոզեհըմայ :
Եւ դուն եկա՞ր ,
Օօսականի մեծ նիրհողի նուրով լիցուած .
Մինչ նոզիդի մէջ կը մեծնա՞ր
Ետէալին այզը ոսկի ,
Եւ վըրէժի բոցը կարմիր , բու նոզեծին
Զաւակներուն :

Եւ Սիրնի այս բարձունիտէն՝
Խնչպէս երեմն Ս.րմաշ .
Ճեղեղեցիր մեղը մժիդ
Ծարաւանիւծ նոզիներուն մէջ եւշանիկ :
Ո՞վ , դուն լոյսի նըսկայ փառու ,
Զզացումի անհուն պարտէկ ,
Եւ բու նոզիդ սիրոյ երկինք ,
Մատեանի մը նըման բացուած
Մեր աշխերուն :

Բայց եւազին հազիւ թերած
Էջն առաջին .
Մահուան սժգոյն մատներուն տակ
Հուսկ փակուեցաւ նայուածէդ անո՞յ
Աստենական վընիտ լոյսին :
Բայց մընացիր հաւատարիմ , մեծ տարազին բու մեծ եղրօ ,
«Թէ հառազայրն ե՞ր է բաղուեր» ,
Ու դուն մահովդ անմահացար :

Թոյլ տուր ինծի , ո՞վ անսահման
Ներողուրիւն .
Երէ այսօր յիշատակիդ առչեւ կեցած ,
Ես մին յետին մածումիդ զաւակներէն ,
Փոխան ուրիշ հազարներու ,
Ս.նզամ մըն ալ արտասուազին , իմ նոզիիս երզը երզեմ ,
Պաղատելով , որ դուն բնաւ մեզ չլրիս ,
Ու նոզիովդ մեզ նես ըլլաս ,
Յաւերժօրէն մեզ խրախոյս ,
Պարտի , զոնի ու գիտութեան սուրբ համբային՝
Մեզի ռահորդ
Մահէն ալ վեր , մահէն ալ վեր :

ԵԳԻՒՎԱՐԻ

ՀԱԽՈՍԱԿԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ՊԵԳՈՒՄՆԵՐ ԲԵԹՂԵԼԷՄԻ ՏԱԶԱՐԻՆ ՄԷՋ

Անգղիացի ճարտարապետներէ բաղկացեալ Յանձնախումբ մը, որուն հախագոհն է Մք. Հարզէյ, Ս. Յարութեան տաճարի ամբութիւնը քննելու համար լուսառնէն եկած էր Երուսաղէմ: Պաղեստինի Հոգածար կառավարութեան յանձնաբարութեամբ տարւոյո Ապրիլ 20էն ոկտեմբերին Յանձնախումբը ձեռնարկեց նաև քննել ի Բեթղեհէմ Յիսուսի Ծննդեան Այրին վրայ բարձրացած հնագոյն տաճարը:

Չորս ամսուան աշխատանքէ յիշոյ՝ առ այժմ դադար տրուած է պիղումներուն, զորս նպատակ ունին շարունակել հետզհետէ:

Պեղումներու ատեն երեան հանուած խճանկար յատակներն և հնագոյն չէնքերու մնացրդները վիրին աստիճանի հատաքրիական են ու առաջ նիւթ էր մատակարարեն պաղեստինացէներու խօսքին ու գրիչին:

Նկատելով որ մենք Հայերս դարերէ իվեր կարեսը իրաւունքներու տէր ենք այդ պատմական ու նույիրուկան տաճարին մէջ և հոն ունինք կիլիկեան չբջանէն մնացած յիշատակարաններ, ունիւրդ չենք համարիր կատարուած պիղումներու արդիւնքը ներկայացնել ԱԻՌՆի ընթերցողներուն, քաղելով Mamert Vionnetի ուսումնասիրութենէն, որ 24 Յունիս և 24 Յուլիս թուականները կրող երկու յաջորդական յօդուածներով երեցաւ JÉRUSALEM երկամսնեայ հանդէսի Յուլիս-Օգոստոս համարին մէջ:

Այս ուսումնասիրութիւնը բաւական լոյս կը սփոք Բեթղեհէմի Ս. Ծննդեան տաճարի պատմութեան վրայ, թէե հեռուէ տակաւին վիրջին խօսքը ըսելէ, քանի որ, ինչպէս ըսինք, անաւարտ կը մնան դեռ պեղումները ու նպատակ կայ յառաջ տանիլ զանոնք հետզհետէ:

Ա. ԱՌԱՋԻՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ.

1. ՏԱԶԱՐԻՆ ԱՎՐՈՒԹԻՒՆԸ.

Առուր Յարութեան կամարներու քընութեան ծառայող թեթե լոստուկները հաստատուեցան նաև Բեթղեհէմի տաճարին մէջ՝ քննելու համար տապարի պէտք ունենալով՝ այդ նպատակին կը ծառայեցնեն Բեթղեհէմի եկեղեցիին տանիքի կապարեայ ծածկը, ու ատոր հետեանքով ծանրապէս կը վեասուին աստատագի գերանները, այնպէս որ պէտք կ'ըլլայ ամրոգջապին փոխել զանոնք և նոր առաստաղ մը չինել: Ժի. զարէն ասպին նման նորոգութեան մը տեղի ունենալը չի յիշուիր: Եւ սակայն, հակառակ երեք գարերու իր գոյութեան, առաստաղը պէտք վիճակի մէջ մնացած է ցարդ ու կրնայ տոկու տակաւին երկար տաեն:


Առաստաղի քննութիւնը աւարտելէն անմիջապէս վերջ՝ անգղիացի ճարտարապետներու Յանձնախումբը իր գործաւորներուն միջոցաւ ձեռնարկեց եկեղեցիի հիմքաւն քննութեան:

Առաջին քննութեան տաեն, որ տեղի ունեցաւ եկեղեցիի սիւնազարդ մասի հարաւարեմտեան անկիւնը, այսինքն աջակողմը՝ ներս մտած տաեն, երեան ելաւ սե երիգով մը ըրջանակուած ըստ բաւականին նըրակերտ խճանկար յատակ մը, որ 75 սնգմ. ցած էր այժմեան սալայատակին: Ասիկա տարակոյս չկայ՝ թէ կոստանդինեան եկեղեցիին յատակը միայն կրնար ըլլաւ: Բայց գարմանք պատճառող պարագան սա՞ է էր՝ որ այն պատուանդանը, որու վրայ կանգնած էր սիւներու շարքը,

գրեթէ 20 սնդմ. բարձր էր խճանկար յատակի մակերեսէն, որուն բոլոր եղերքաները խանդարուած էին, ու ասիկա այն կարծիքը կու տար թէ յետնազոյն ժամանակի մէջ նորոգութիւն մը եղած է հոն։ Անդպացի ճարտարապետները խորացուցին պեղութիւնը մինչև ժայռը։ Այն ատենականուցաւ որ ժայռին մակերեսը խճամբավ հարթուած էր, որպէսզի իրբե հիմ ծառայէր սիւներու յիշեալ պատուանդանին, որ շինուած էր գեղեցիկ լայն քարերով, մէկ ոչ այնքան որրատաշ։ Պատ-

նութեան ժամանակ, այսինքն կոստանդիանոսի շրջանին, սիւներու պատուանց դանը բարձր չէր խճանկար յատակի մակերեսէն, այլ ընդհակառակը 10 սնդմ. աւելի ցոծ էր անկէ, ինչոր կը հաստատուի՛ թէ ուշագրութեամբ դիտուի քարերու առաջին շարքը։

Աւելի կարծր ու աւելի խճամբավ կոփուած քարերէ բազկացեալ պատուանդանի առաջին շարքը, որ 20 սնդմ. հեռու է խճանկարէն, յետին ժամանակի նորոգութիւն մըն է, որ եղած է Յուստինիանոս



Յերզինեմի Ս. Մանեան Տաճարը։

ուանդանին վերև կը գտնուէր շարք մը աւելի կարծր ու աւելի նուրբ կոփուած քարերու, որոնց վրայ, սիւներու հաստատուած տեղը, իրբե սիւնախարիսխո քառակուսի գեղեցիկ քարեր կը հանդէէին։ Ծինութեան այս միւնոյն ձեւ և քարերու միւնոյն շարուածքը տեսնուցան նաև տաճարի գանազան տարբեր կէտերուն վրայ։

Տաճական տրամաբանական կը թուի ուրեմն եղբակացնել թէ խճանկարի մէ-

կայսեր (527-569) հրամանով։ Բայց անիւ կա պիտի չկրնար այդ նորոգութիւնը ընել ու կոստանդինեան շինուածքի սիւները վեր բարձրացնել՝ առանց քանդելու կոստանդիանոսի եկեղեցին։


Այս տրամաբանական եղբակացութիւնը կը հիմնուի Ժ. զարէն հասած վաւերազրի մը վրայ։ Այդ զարուն Աղեքսանդրիոյ եւտիքիոս պատրիարքը Բեթղեհէմի եկեղեցի շինութեան մասին հատաքրքրական

զէպք մը առաջ կը բերէ իր Տարեգիրքին մէջ։ Նախեառաջ կը նկարազրէ Երուսա-
ղէմի Պետրոս պատրիարքին կողմէ Առոքք Սարայի բանագնուց զրկուիլը Բիւզանդիոնի արքունիքին մօտ, որպէսզի Յուստինիոսոս կայսեր օգնութիւնը հայցէ թէ ի նպաստ 529 թուին Սամարացիներէ կողոպտուած ու հրդեհուած եկեղեցիներու նորոգութեան և թէ ուրիշ կարգ մը բարեպաշտական հաստատութեանց, մասնաւորապէս նորա-
կերտ Արքունի Մարիամ եկեղեցիլ չինու-
թեան։ Ապա Տարեգիրքին հեղինակը Յուս-
տինիանոսի կողմէ արուած հրամանները

2. ԹԷՌԴՈՐՈՍ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ.

Եւտիքիոս ապա կը յարէ՝ թէ կայսրը զժզոն մնալով Թէոդորոսի նորոգութենէն, կը յանդիմանէ զայն՝ յումպէտս վատնած ըլլալուն համար իրեն յանձնուած գումա-
րը, ու կտրել կու տայ անոր զլու խը։

Յիշեալ վաւերագիրը, ուրեմն, ճշգր-
տօրէն կը ներկայացնէ այն զէպքերը, զորո-
կու զան հաստատել այժմեան պեղումները։
Կարելի է հիմա վստահարար ըսեհ՝ թէ բիւ-
զանդացի ճարտարապետը կոստանդինեան
եկեղեցին քանդած ու նորը չինած է հիմէն։



ՏԱՐԵԳԻՐՔԻ ՅԱՍԱԿԱՂԻՑԻԾՐ

- Աղբանոսի մենեանին պատր. ա) Եկեղեցիի վերածուած մենեանին Տիբոնէական խնանկարը։ —
- Կոստանդիանոսին առջի եկեղեցիին պատր. բ) Եօյնին խնանկարը, զ) Եօյնին սանզուխը։ —
- Կոստանդիանոսի պատր. դ) դուռը, ե) սեմեր. — 4. Յուստինիանոսի պատեր. —
- Բերդենէմի մանկաց սուռելկեայ այր. —
7. 8. 11. Սուռելկեայ գերեզմաններ. — 9. Յերոնիմոսի սուռելկեայ մատուք. — 10. Ա. Մենիեան Այր. —

յիշելէ յետոյ՝ կ'աւելցնէ. «Կայսրը իր զըր-
կած անձին հրամայեց բանդի Եերդինեմի
եկեղեցին, քանզի փոքր շենք մըն էր ան, ու
տեղը չինել հոյակապ ու լյանանիս այն-
պիսի եկեղեցի մը, որուն նմանը չգտնուի
Երուսաղէմի մէջ։ Դրկուած անձը (Թէոդո-
րոս ճարտարապէտ) հասնելով Երուսաղէմ՝
չինեց օտարներու համար հիւրանոց մը,
աւարտեց նորակերտ Արքունի Մարիամի
չինութիւնը, նորոգեց Սամարացիներու
ձեռամբ հրդեհուած եկեղեցիները, հիմնեց
նորանոր վանքեր, ու վերջապէս՝ բանդից
Բերդենէմի եկեղեցին ու վերափենց զայն
այնպէս՝ ինչպէս որ է այսօր»։

Այս նոր չինութեան մէջ բաւական աշ-
քի զարնող ուրիշ փոփոխութիւններ աւ
եղան։

Զ. դարուն բիւզանդացի ճարտարապետները եկեղեցիներու նոր յատակագիծ մը յշացած էին: Քրիստոնէական չէնքերու խաչաձև յատակագիծը, որ խիստ հաղուազէպ էլ նախընթաց գարերուն, կը սկսէր ընդհանրանալ՝ իրեւ խորհրդանշող քրիստոնէական գաղափարին: Միւս կողմէ՝ երեան կ'ելլէին եկեղեցական պաշտամանց նորանոր պահանջներ, որով կը ստիպուէին պատրագ մատուցուած տեղին զատ ուրիշ տեղեր ալ չինել: Ահա՝ այսպէս բիւզանդական եկեղեցիներու մէջ սկսան շինուիլ խորհրդանոցը (Prothèsē) և Աւանդառունը կոմ Սարկաւագառունը (Diaconicon): Խորհրդանոցը սովորաբար կը դանուէր պատարագամատոյց սեղանին ոչ կամ հիւսիսային կողմը և Սարկաւագառունը՝ ձախ կամ հարաւային կողմը:

Բեթղեհէմի մէջ թէոգորոս ճարտարապետ կրցած է զիւրութեամբ իրականացնել իր այս նոր յատակագիծը: Սխալ չ'ըլլար հնթագրել՝ թէ կոստանդիանոսի գարուն կային արդէն երկու փոքրիկ կողակներ եկեղեցիի այժմեան թեերուն երկու ծայրերը: Սակայն հիւսիսային ու հարաւային այդ երկու փոքրիկ կողակները մաս չէին կազմեր կոստանդիանոսի եկեղեցիին, որ ունէր միայն մէկ կողակ: Այդ փոքրիկ կողակները, որոնց նման կրնար հատ մըն ալ դանուիլ զիւսաւոր կողակին ետին՝ արեւակողմը, պէտք է ծառայած ըլլային իրեւ մկրտարան: Եւ արդէն նախնական եկեղեցիներու մէջ մկրտարանը զիտեղուած կ'ըլլար եկեղեցիի սնարքի կողմը: Խոկ քանի մը եկեղեցիներ ունէին նոյնիսկ մէկէ աւելի մկրտարաններ: Բեթղեհէմի մէջ զանազան ազգեր, որոնք իրենց լեզուով սաղմասերութիւններ կ'ընէին Սրբունի Պաւլինէի յուղարկաւորութեան ժամանակ, կրնային իրենց յատուկ մկրտարանները ունինալ: Եթէ պեղումները առաջ տարուին՝ հաւանական է որ երեան ելլեն կոստանդինեան այս կողակամեւ մկրտարանները եկեղեցիի այժմեան թեերուն ծայրը: Յուստիսունոսի ճարտարապետը՝ թէոգորոս՝ ուրիշ բան չէ ըրած, բայց միայն ընդլայնած է նախկին հիմներ ու իրական կողակներ ձեացուցած է նորաշէն եկեղեցիին մէջ:

Պեղումները երեան բերին նաև զէպի ծննդեան Այրին վրայ բացուող սանդուխի

մը ներկայութիւնը: Հ. Վէնսուն և Հ. Արեւ կանուխին ենթազրած էին արդէն այդպիսի սանդուխի մը զոյութիւնը՝ բացուածք մը նշամարելով Այրին ժայռուտ ներքնակողմը, Լատինաց սեպհական նրբանցքին մէջ: Կոստանդինեան գարու այս սանդուխի յայտնի է որ խոփանուած է Յուստիսիանոսի ժամանակ՝ Սիւնազարդի նախկին խճանկար յատակը ծածկուելուն և 65 սնդմ. վեր բարձրանալուն պատճառաւ, ու նոր յատակը ծածկուած է մարմարիսոնէ սալաքարերով, որուն նմանները կ'երեխն դեռ Յուստիս եկեղեցիին մէջ ու անոր կրղակին քովերը: Այդ սալաքարերը վերցուցին ետքէն լրանկարականները և Օմարի մղկիթը փոխպերցին:

Թէոգորոս ճարտարապետի կոստանդինեան եկեղեցիին վրայ կատարած այս նորոգութեան ատեն վերցուեցաւ ներքնանդակուկը (atrium) ու անոր տեղ զըրուեցաւ նախախելքարան մը կամ գալիք մը (narthex), որ Զ. դարուն շատ ընդհանրացած էր արդէն:

Յուստիսիանոս այս աշխատաւթեանց մասին երբ տեղեկացու իր ճարտարապետէն՝ զժգոհ մնաց անկէ, վասնզի անիկաչէր կրցած իր վեհապետին փափաքին համաձայն լայնանիստ ու վեհաշուաք եկեղեցի մը կառուցանել, ու իր այդ յանցաւոր զանցառութիւնը քաւած էր իր գլխապարտութեամբ:

Եկեղեցիի սիւնազարդ մասին մէջ երեան հանոււած կոստանդինեան մոզայիքները կը ներկայացնեն այլեայլ գունաւոր նկարներ և հրաշալի եկեղեցարդեր: Ասոնց մասին գաղափար մը տալու համար՝ մէկ քանի լուսանկարներ կը ներկայացնենք յօդուածիս հետ: Ափսօն որ խանգարուած է այդ խճանկարներու կարեսը մէկ մասը ու անոնց հետ թերեւս փնացած ըլլան նաև արձանագրութիւններ:


Կեղեղեցիկ սանդուխի ճախակողմը խճանկար յունարէն բառ մը միայն գտնուեցաւ — IXΘΥC, որ կազմուած է Կոստն Կրտտէ Թէօն Տնէ Սատէր (= Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ Փրկիչ) բառերու սկզբնատառերէն:

Բ. ՆԱՐ ՊԵՂԱՌԻՄՆԵՐ.

Բեթղեհէմի եկեղեցիին մէջ կատար-

ուած առաջին պեղումներէն յիշոյ Լոն-
տոնէն եկած անզգիացի ճարտարապետաց
Յանձնախումբի նախագահ Մր. Հարվիլ,
որ պաշտօն ունէր չէնքին ամբութիւնը
քննելու, չարունակեց պեղումները, որոնք
նոր ու շատ կարևոր արդիւնքներ տալին:
Առաջին պեղումներուն հեղինակը իր՝ 24

սիսակողմը գտնուած գեղեցիկ խճանկար-
ները յուսալ կռւ տային թէ աւելի կարևոր-
ները երեան պիտի ելլերն հարաւային կող-
մը: Հողերը վերցնելու աշխատանքը բա-
ւական փափուկ եղաւ ու մեծածախս, բայց
զժրախտաբար տուանց ունէ զոհացուցիչ
արդիւնքի: Հարաւակողմի խճանկարները



Խճանկար Յունական արձանագրութեամբ:

Յուլիս թուակիր երկրորդ յօդուածով կը
ներկայացնէ սոյն նոր պեղումներու մասին
իր տեսութիւնները, զորս քաղուածաբար
առաջ կը բերենք ստորեւ:

1. ԿՈՍՏԱԴԻՒՆԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՒՆ ԽՃԱՆԿԱՐՆԵՐՆ
ՈՒ ՍԵՄԵՐԸ.

Եկեղեցիի սիւնազարդի կեղրոնին հիւ-


նուազ անտարտ մնացած էին քան հիւ-
սիսակողմինները, և հոն քանի մը տեղեր
մինչեւ անգամ հրդեհի ու մոխրի հետքեր
նկատուեցան: Առաստաղի զերանները,
զորս Սամարացիք 529ին կրակի տաւած
էին, կը թուի թէ այդ տեղին վրայ ինկած
էին ու իրենց անկումով խճանկարի կա-
րեսը մէկ մասը վճացնելէ յիշոյ՝ նոյն այդ

տեղը մոխրացած և նորանոր աւելներ գործած էին:

Սիւնազարդի կեղրոնք, այսինքն երկու կողմի սիւներու կրկնակ շարքերուն մէջ-տեղի յատակը ամբողջովին բացուելէ վերջ՝

տակի խճանկարներու նրբութիւնը. ատոնք երկրաչափական նկարներ էին ու կեղրոնք ծաղկածե զարդեր կային:

Հնախօսները ի տես այս նուազ խճամ-քով շինուած խճանկարուն, կարծիք




Կոստանդնեան խճանկար՝ Սիւնազարդին կեդրոնը:

անոր հարաւային կողմնակի մասին վրայ առաջին քննութիւն մը կատարուեցաւ, ու այնտեղ նորէն խճանկարներ երեան ելան, որոնք չունէին սակայն կեղրոնական յա-

յայտնեցին՝ թէ ատոնց ամբողջութիւնը կրնար Կոստանդիանոսէ վերջի և Յուստի-նիանոսէ առաջուան ըրջանի մը գործը ե-ղած ըլլաւ, մանաւանդ որ այս վերջին

խճանկարի մակերեսը չէր յարմարեր Յուշաց եկեղեցին առջև նոր դանուած սանդղութիւն ուղղութեան։ Այդ սանդղութը չինսուած էր փխրուն քարերով, յարենման կոստանդինեան եկեղեցիի սեմի քարերուն։

ճշգիւ կը միանար այդ սեմերուն, միայն մօտաւորապէս 15 սնդմ. ցած մակերեսով մը։ Չափակողմի սեմին աստիճանը աեղ մը շատ մաշուած էր երթեւեկէն, ու հարկ տեսնուած էր մոզայիքէ կարկտանով մը հաւասարեցնել




Կոստանդինեան խճանկար՝ Սիւնազարդին կեդրոնը։

Այդ սեմերէն երկուքը, միջինը և ձաւխակողմինը, բացուած էին արդէն։ Անոնք հիմակուան պատէն 1,75 մէզր զէսփիներս կը գտնուած էին։ Այդ կողմի խճանկար յատակը

գտյն ընդհանուր մակերեսին։ Այսպիսի բան մըն ալ նկատուած է նորագիւտ սանդղութին վրայ, ուր մոզայիքով լեցուած է մաշուած իշան ցած իջած աստիճանին երեսը։

Այդ խճանկարներու մասին ինչ որ տորին մէջ կը խօսի Խստրիոյ Պարենցոյ քառական զանազան կարծիքները, կարելի չէ սակայն հաստատել թէ Կոստանդիանոսէ յիշնագոյն շրջանի մը զործ եղած ըլլան անոնք, վասնզի կան համեմատութեան տորին մէջ կը խօսի Խստրիոյ Պարենցոյ քառական զանազան կարծիքները մը խճանկարի մը խճանկարի մասին, որ յատկապէս ուսումնասիրուած է Amoroso և Marouchi գիտաւննեանոնք, վասնզի կան համեմատութեան բու կողմէ ու կը համարուի աւելի առաջ



Կոստանդինեան խճանկար՝ Սիւնազարդին կեղրոնք :

կէտեր, որ թոյլ կու տան մօտեցնել զանանք աւելի նախնազոյն շրջանի մը :

Dom Leclercq իր Manuel d'Archéologie chrétienne անուն զործին երկրորդ Հա-

քան Դիոնկիսիանոսի հաղածանքը՝ 303ին :

Աչքի զարնող մեծ նմանութիւն մը կայ այդ խճանկարին ու Բեթղեհէմի խճանկարներուն միջն : Այդ երկու քը զրեթէ միենոյն

զարդերը ունին — քառողիուսի զարդերու միջև զետեղուած յունագրուագ խաչաձեւեր — որոնք թէ հոս և թէ հոն ընդհանուր նմանութիւն մը ունին իրարու հոտ։ Պէտք է ըսկէ, ստկայն, թէ նեթզեհէմի խճանկարները աւելի տպաւորիչ են իրենց լայն ու շքեղ եկեղեցպարգերով։ Ասկէ զատ Բնեթզեհէմի եկեղեցիին մէջ ուրիշ զարդանկարներ ալ կան, անբազդատելիորէն աւելի գեղեցիկ, որոնք միայն յատկանիչն են կոստանդինեան զարուն։

2. ՅՈՒՆԱՑ ԵԿԵՂԵՑԻ ԱՌՋԵՒԻ ՍԱՆԴՈՒԽԸ.

Քառեցաւ արդէն՝ թէ Ալեքսագրարդի արեւլակողմը՝ Յունաց եկեղեցիին առջեւ շքեղ սանդուխ մը գտնուած է երեք աստիճաններով, որոնց երկու քը միայն տեսանելի են ու այժմ։ Սանդուխը 5 մէջր լայնք և 1,60 մէջը երկարութիւն ունի ու կը զպչի պատի մը, որ կամաշողախոս ծփուած կը թուի, ու շինուած է փիլորուն տեղական քարերով։ Խոկ աստիճանները շատ մաշտած են։ Առաջին աստիճանին ձախակողմը, զէպի հարաւ, այնքան ցած իջած է՝ որ խճանկար յատակը անոր վրայ հակած է։ Այս սանդուխը, ինչպէս ըստեցաւ, յետնագոյն չէ խճանկարէն, այլ ժամանակից է անոր։

Միւս կողմէն առաջին աստիճանը 8 սնդմ. վեր է խճանկարէն, ու այս հանգամանքն է որ բաւական դժուարալոյծ խնդիր մը մէջտեղ կը դնէ, վասնզի անհաւանական կը թուի որ ճարտարապետը սանդուխի առաջին աստիճանը 8 սնդմ. բարձր ըրած ըլլայ յատակի մակերեսէն։ Այս պատճառաւ ոմանք տարուեցան կարծէլ՝ թէ խճանկարն ու սանդուխը միւնոյն ժամանակի զործ չեն, քանի որ սանդուխի առաջին աստիճանին բարձրութիւնը մօտաւորակէս 16 սնդմ. վեր է խճանկարի ներքեւ գտնուած ժայռէն։ Եթէ կոստանդինեան է խճանկարը՝ սանդուխը անտարակոյս աւելի առաջ պէտք է շինուած ըլլայ, իսկ եթէ կոստանդինեան է սանդուխը՝ այն ատեն խճանակարը ետքի ժամանակի զործ պէտք է ըլլայ։ Այս է պատճառը որ հսախօսներէ ոմանց կարծել կու տայ թէ յետնագոյն ժամանակի զործ է խճանկարը։

Ուսումնասիրութեանս հեղինակը կը հա-

ւատայ, ստկայն, թէ ամբողջ խճանկարը կոստանդինեան շրջանին կը պատկանի, հետեւապէս աւելի հին պէտք է ըլլայ սանդուխը։ Ասոր ապացոյցը կու տայ քիչ մը անդին։

Կոստանդինոսի ճարտարապետը իր աշխատած մոսին մէջ բացաւ ուրիշ սանդուխի մը տեղը, տարբեր ուզգութիւնով մը, որ կը բացուէր նմնգեան Այրին վրայ։ Ետքէն Յուստինիանոսի ճարտարապետը, որ Ալեքսագրարդի մակերեսը բարձրացուցած էր 65 սնդմ., չկրցաւ օգտագործել կոստանդինեան սանդուխը, ու ստիպուեցաւ շինել գէպի Ա. Այրը իջնող բոլորը այն երկու սանդուխները, զորս անփոփոխ պահեցին Խաչակիրք ու անոնք են որ գոյութիւն ունին տակաւին մինչեւ այսօր։

3. ԶԱԽԱԿՈՆՄԵԱՆ ԿԱՄ ՀԻՒԽԱՅԻՆ ԹԵՒԸ.

Առաջ բերուած այս խճանկարէն զատ կան նաև ուրիշներ, որոնք երթարով հետաքրքրական կը զարձնեն պեղումները, զորս հասցուցին մինչեւ եկեղեցիի ձախակողմի թեւը, այսինքն մինչեւ Յուստինիանոսի ճարտարապետին շինուած հիւստիային կողակը, որ Հայոց բաժինին մէջ կ'իյնայ այժմ ու հոն կը կատարեն անոնք իրենց պաշտամունքները։ Այս գօտիին մէջ զբանուած են չենքերու այնպիսի մնացորդներ, որոնք հնախօսական ամենամեծ արժէք ունին նեթզեհէմի Ա. Այրին պատմութեան համար։

ա) Կոստանդինոսի պատը։ — Այս կէտին վրայ կատարուած պեղումներու նպատակն էր ճշգել կոստանդինոսի պատը, որ, ինչպէս կը կարծուէր, այդ կողմէն սահմանը պիտի ըլլար եկեղեցիի շէնքին։ Հսուեցաւ՝ թէ կոստանդինոսի ժամանակի միայն մէկ կողակ ունէին։

Յուստինիանոսի կողակի ամբողջ լայնքին վրայ երեան ելաւ կոստանդինոսի պատը, զոր կարած էին անոր վրայ հաստատելու համար հիւստիային կողակի հիմը։ Հոն կային մեծագոյն խնամքով զետեղուած ու շատ լաւ վիճակի մէջ մնացած չորս քարաշարքեր, որոնցմէ սակաւ ինչ դուրս ելած մասերը սահմանագծուած էին իր 15 սնդմ. լայնքով բոււական լաւ կոփուած միջնորմով մը։ Ասոր քանի մը քարերը Յուստինիանոսի ճարտարապետը օգ-

տաղործած է կողակին հիմք դրած ատեն։ Կոստանդինեան այս պատին մէջտեղ պէտք էր ըլլար նաև զուռ մը, վասնզի դանուցաւ սրբատաշ քարերով դրանդի մը, որ իր տեղը կը մնար տակաւին։ Այս գիւտը կու զար հաստատել այն ևնթագրութիւնը, զոր ուսումնասիրութեանս հեղինակը իր նախընթաց յօդուածին մէջ ըրած էր մկրտարանի մը հոն ներկայութեան մասին։

բ) Ալրիանոսի կլորակ մենիսանը. — Յօդուածագիրը ևնթագրած էր նաև՝ թէ այդ մկրտարանին տեղը փորբիկ կողակ մը կար, ևկեղեցին դուրս, կոստանդինեան պատին հաւեռքը շինուած ու վերոյիշեալ դրան միջոցաւ ևկեղեցիին միացած։ Պայտաթիւն ունեցած է արդաւե այդ փոքրիկ կողակը ու զանուած է անիկա հիմա։ Բայց սովորական կողակ մը չէ այն, այլ բոլորչի աղեղ մը, հազիւ 1,75 մէզր հեռու կոստանդինեան պատին։ Այդ աղեղը իր վրայ ունի 1,85 մէզր բարձրութեամբ քարերու երեք շարքեր, որոնց առաջին երկուքին բարձրութիւնն է 65 ական սնդմ. և երրորդինը՝ 55 սնդմ.։

Ի՞նչ եղած կրնար բլլու այս շինքը։ Անիկա շինուած չէր ոնչուշա իր և մկրտարան։ Կոստանդիանոսին առաջ էր ան՝ թէ վերջը։ Ի՞նչ նպատակի համար ուրիմն շինուած էր անիկա։ Հի՞ն շինք մըն էր արդեօք՝ զոր օգտագործած էր կոստանդիանոսի ճարտարապետը ու ետքին լքուած էր Յուստինիանոսի ճարտարապետին կողմէ։ Ահաւասիկ կարգ մը հարցեր, որ ոնք ժամանակ մը պիտի զրազեցնեն հնախառները։

Ուսումնասիրութեանս հեղինակը իր կողմէ վարկած մը կը ներկայացնէ այս մասին և կը յուսայ որ նորանոր պեղումներ ճշմարտեն դայն։

Յիշեալ քարաշարքի վերհամասի ներքին ճակատին վրայ նուսազ խնամեալ զործ մը նշմարտած է, որու քարերուն տաշուածքը յատկանչական է ու չատ ծանօթ։ Գործաւորը զործածած է այնտեղ իր 8 սնդմ. լայնքով քար տաշող տամանաւոր մաւրճ մը, ու ատով ձեւացուցած է բոլորչի աղեղ մը, իր բազուկին երկարութիւնը ընելով բոլորակին չառաւիզը։ Այս ձեւը, ինչպէս զիտել կու տայ Հ. Վէնսան իր Jérusalem nouvelle երկասիրութեան մէջ, բացորոշապէս հսումէական է ու կը վերտ-

բերի Աղրիանոս կայսեր ժամանակին ու կը տարբերի հերովզէսեան ձեւն, որ կ'երեկ Հրէից Տաճարի սարահարթին հարաւային պատին վրայ։

Շատ բանաւոր է ուրիմն հետեցնել թէ Յեթզեհէմի ևկեղեցիի հայկական բաժինին մէջ այժմ գոյութիւն ունի Աղրիանոս կայսեր ժամանակին հսումէական շէնքի մը մեացորդը։ Յերանիմոս 396 ին առ Պաւլինէ ուղղած նամակին մէջ կը գրէ՝ թէ Աղրիանոս նուիրական անտառ մը տնկած էր Յիսուսի Ծննդեան Այրին վերել, ու հոն կուպաշտները Աստղիկի տարիածուին։ Աղոնիսի պաշտամունքը կը կատարէին։ Բայց Յերուսամոս ուեէ չէնքի յիշուտակութիւն չ'ըներ իր նամակին մէջ։ Արդ՝ կը մեայ այժմ գիտնալ՝ թէ կայի՞ն արդեօք այնպիսի նուիրական անտառներ, որոնց մէջ Վեհստայի կամ ուրիշ չաստուածներու նուիրուած փոքրիկ մեհեաններ չգտնուէին։ Հաստատական պատասխան կու տայ այս մասին Henry Thedenat իր Dictionnaire des antiquités grecques et romaines de Darembert et Saglio զիրքին մէջ։ Անիկա իր աեսութիւնը կը հիմնէ Պաւսանիսի մէկէ աւելի էջերուն վրայ, և ծանօթագրութեան մը մէջ թուելով գրեթէ բոլոր նուիրական անտառները, որոնց մէջ կային մեհեաններ, արձաններ կամ սեղաններ՝ կ'աւելցնէ։ Այդ մեհեանները մերթ կը նուիրուէին ուրիշ տառուածութիւններու ալ, տարբեր անոնց մէ՝ որոնց նուիրուած էին անտառները»։

Այս լուսաբանութեան վրայ հաստատապէս կարելի է ըսել՝ թէ Յեթզեհէմի նուիրական անտառը փոքրիկ մեհեան մը ունէր իր մէջ։ Վերջին պեղումներու տաեն երեան երոծ աղեղը ապացոյց է՝ թէ կար հոն իր 10,70 մէզր տրամագիծով կլորակ մեհեան մը, որ իր տեսակի չէնքերու շատերուն պէս շրջապատուած էր սիւներով։


Իսկ այդ սիւները յետոյ չի՞ն օգտագործուած արդեօք ևկեղեցիի չի՞նութեան ատեն։

Այս հարցումին պատասխանելու համար հարկ է ի մտի ունենալ՝ թէ, ինչպէս կը կարծուի սովորաբար, հսումէական շըրջանի սիւները չատ աղեղ ճշգուած չափեր ունէին և թէ այժմ Յեթզեհէմի ևկեղեցիին մէջ դանուած սիւներն ալ յարենման են ատեն։

զ) Առաջին քրիստոնեական եկեղեցին. — Քանի հետզհետէ առաջ կը տարաւին պեղաւմները, այնքան նորանոր խնդիրներ մէջ տեղ կ'ելլին :

Փոքրիկ չեղանկիւններէ կազմուած ած

թէ ատիկա կոստանդիտանոսի ժամանակէն նախնազոյն դորձ մըն է: Ո՞ր չէնքին կը պատկանէր այդ խճանկարը: Ուսումնասիրութեանս հեղինակը կը կարծէ՝ թէ ատիկա կը պատկանէր հեթանոսական մեհեանին,



Կոստանդինեան խճանկար՝ Միջնադարին կեդրոնը:

խաչերով ցանցնուած սպիտակ խճանկար մը քանդուած է մասամբ կոստանդինեան պատին շինութեան տաեն: Բայց և այնպէս գտնուածն ուղ բաւական է ցոյց տալու՝

բայց այն ժամանակաշրջանին՝ երբ քրիստոնեայի գրաւած էին մենանը: Յերսնիմոսի վկայութեան համաձայն՝ նուիրական անտառը թէև հեթանոսներու ձեռքն էր մին-

չեւ կոստանդիանոս, բայց պէտք է նկատի ունենալ՝ թէ քրիստոնեաները Յիսուսի ծննդեան յիշտակը անխափան կը պատռէին Ս. Այրին մէջ, ինչովէս 155 թուականին կը վկայէ Ս. Յուստինոս Նապլուացին (*): Այդ ժաման համաձայնութիւն մը գոյացած էր անշուշտ հեթանոսներու հետ, ինչպէս նման համաձայնութիւններ եղած էին այլուր, զոր օրինակ Մամբրէի մէջ, դիտել կու տայ Հ. Վէնուան։ Տարբեր օրեր, նոյն իսկ միեւնոյն օրը, հեթանոսները Աղոստիսի և քրիստոնեաները Յիսուսի տօնը կը կատարէին։

Իսկ Բեթղեհէմի Նուիրական անտառը կը յաճախէին միայն լեգէոնական զինուորներ ու քանի մը անցորդ սիւրիացի վաճառականներ։ Անտառը աւելի կամ նուազ լքուեցաւ, երբ հասմէական լեգէոնները մասամբ հեռացան Երաւանդէմէն դէպի կայսրութեան ուրիշ կողմէրը։ Առոր մերձաւոր թուականը կրնայ ըլլու Մարկոս Աւրելիոս կայսեր շրջանը (161-180), զան զի ան էր որ պաշտպանեց կայսրութիւնը Պարթէաներու և ՚անուրի բարբարոս յեւլուզակներուն դէմ։ Իր որդին ու յաջորդը Կոմոզոս (180-192) չափազանց անձնատուր ըլլալով խաղերու և հաճոյքներու, չհալածեց քրիստոնեաները։ Անիկա զոհացում տալու համար իր սնափառութեան ու բարձրացնելու համար իր անուան հմայքը՝ իրեն վերագրեց իր հօր բոլոր փառքն ու արժանիքները։ Հռոմ ու Երաւանդէմ կոմոզոսնեան գաղթականութիւններ եղան, զինուորներն ու ծերակուտականները կոմոզիանի անունը կը կրէին և տարիին ամբոները իր անուններով ու տիտղոսներով կոչուեցան։

Հետեւապէս կարելի է Ենթագրել՝ թէ անոր օրով յիշեալ հեթանոսական փոքրիկ մեհեանը, որ երեսի վրայ ձգուած էր, Մննդղեան առաջին եկեղեցին եղաւ, մինչեւ որ յետոյ անոր տեղ աւելի մեծ եկեղեցի մը շինուեցաւ։

յ) Երկրորդ քիսոնեական եկեղեցին։—

(*) «Բեթղեհէմի քրիստոնեաները կը հաստատեն իրենց հայրերէն ընդունած աւանդութիւնը» ցոյց տալով այն այրը, ուր ձնաւ Կոյօր ու հանգչեցուց իր «ըգին»։ Եթէ ցոյց կու տային այրը, ուրին երեսն կրնային հօն մտնել։ Կրնային նու զայն պատուել։

Քրիստոնէական եկեղեցիի վերածուած հետանոսական փոքրիկ մեհեանը, ըլլայ կամուոր՝ ըլլայ ակամայ, քանդուելէն վերջ, նոր եկեղեցի մը շինուեցու յառաջ քան կոստանդիանոսի եկեղեցին։ Պեղումները, ինչպէս կ'երեխ, կը հաստատեն այս վարկածը ։

Դարձեալ այս միենոյն հայկական բաժինին կամ հիւսիսային թեսին մէջ յիշեալ խաչազարդ խճանկարի հարաւային կողմը, կոստանդիանեան պատին զուգահեռական ուղղութեամբ, երեան ելաւ խոշոր պատմը, որ այցմեան եկեղեցիի առաջին սիւնաշարքի պատուանդանին շարունակութիւնն է՝ սկսելով հիւսիսային պատէն։ Հարկ է նկատի ունենալ՝ թէ սիւնաշարքի պատուանդանը միայն 90 սնդմ. լայնութիւն ունի, մինչդեռ այս նոր պատին լայնութիւնն է 1,75 մէգը, ու կը բաղկանայ երկու ազեղներէ և կ'անցնի Բերդինեմի Մանկանց ստորերկրեայ այրին վերեէն։

Իրեւ չատ կարեսը պարագայ պէտք է յիշել՝ թէ երեան ելաւ նաև հեթանոսական մեհեանի յատակէն աւելի բարձր մոկերեսով խճանկար մը, որուն եզերքը կը հասնի մինչև այս նոր պատը։ Վերջինիս հիմին մէջ, զուրսի կողմէն, զտնուեցան երկու քարեր, որոնց վրայ կան խորանկ փորտւած երկու խաչեր։

Այս նոր խճանկարն ալ հիանալի գոյներու պէսպիսութիւն մը ունի ու կը ներկայացնէ որթատունկիր և խաղողի ողկոյզներ։ Խճանկարը եկեղեռած է իրարու մէջ ընդելուզուած ժապաւէններով՝ նման Արտազարդի մեծ խճանկարի եզերազարդերուն։ Այդ եզերքները ութանկիւնի ձեկի մը վրայ շինուած են ու կ'աւերտին սպիտակ մոզայիքով մը։ Այս նոր պատին և Յունաց եկեղեցիի պատին ձեւացուցած անկիւնի մէջ խճանկարը կ'ընդհատուի զրեթէ 30 սնդմ. պատով մը, զոր ստիպուեր են քանդել՝ կոստանդիանոսի եկեղեցիին յատակը չինելու համար։ Բայց տեղին վրայ տակաւին չատ որոշ կը տեսնուին դուրս ելած մասերը այս փոքր պատին, որուն ամէն կողմէրը ճշգութեամբ կցուած են սպիտակ մոզայիքէ յատակին։ Ատիէ կը հասկցուի՝ թէ ճարտարապետները ուղած են ութանկիւն ձեւ մը տալ քառանկիւն չէնքի մը ներքնակողմին։

Բայց և այնպէս ասոնք ամէնքը գաղտանիք կը մեան տակաւին։ Պեղումները դեռևս բաւական առաջ տարրուած չեն, որպէս զի կարելի լինի որոշ եղբակացութեան մը յանդիլ։ Աւսումնասիրութեանս հեղինակը, սակայն, վերև յիշուած երեսոյթներէն դատելով՝ կը համարձակի ըսեկ՝ թէ հեթանոսական կը մեհեանէն յետոյ և կոստանդինեան տաճարէն առաջ շինուած եկեղեցի մը կար այստեղ։

Այս նոր գտնուած պատէն մինչեւ այժմեան եկեղեցին արեւելքն արեւմուտք երկարող կեղրոնական գլխին երկարութիւնն է իրը 9 մէզը։ Ասիկա եկեղեցիին՝ հիւսիսէն հարաւ ուղղութեամբ՝ ընդհանուր լայնքին (18 մէզը) ճիշդ կէսն է։ Հիանապէս Յուստինիանոսի եկեղեցիի յատակագիծին վրայ այս միւնիոյն չտփը եթէ տրուի նաև եկեղեցիի երկարութեան՝ արեւմուտքէն արեւելք ուղղութեամբ՝ այն ատեն այս հին չէնքին համար ենթադրուած պատերը ճիշդ ու ճիշդ կը համապատասխաննեն Յուստինիանոսի եկեղեցիի պատերուն, որոնք հաւանաբար բարձրացած են նախկին չէնքին հիմերուն վրայ։

Իսկ եկեղեցիի հայկական բաժինի հանդիպակաց կամ հարաւային թեին մէջ, ուր մասնաւոր խնամքով պեղումներ կատարուեցան, ուէ պատ չէ դանուած, նոյն իսկ կոստանդինոսի ժամանակէն։ Բաւական բարձր ժայռ մը միայն երեան ելուծ է հօն, որուն վրայ դրուած էին չէնքին հիմերը, կ'երեի թէ կոստանդինոսի և Յուստինիանոսի ճարտարապետները յաջորդաբար քանդած էին ամէն բան, որպէսզի կարենային եկեղեցիին յատակը յարդարել^(*)։

Ենթադրուած այդ չէնքը կրնար կը բարձր մեհեանէն վերջ երկրորդ եկեղեցի մը եղած ըլլալ, հաւանաբար առանց կողակի, դուրսէն քառանկիւն ու ներսէն ութանկիւն, ու ամբողջութեամբ ծածկած ըլլար Ծննդեան Այրը։ Այդ երկրորդ եկեղեցին արեւմտեան կողմէն երկնցած ըլլալու էր


մինչև Յուստ այժմեան եկեղեցին ծայրը։ Հոն է որ կը զանուէր նոր երեան եղած 5 մէզը լայնքով սանդուխը, ու տառվ կը բացատրուի անոր ներկայութիւնը այնաւելզ Այն ատեն կարելի կ'ըլլայ դիրաւը բրունել՝ թէ կոստանդինոսի ճարտարապետը շատ մաշուած տեսնելով այդ սանդուխին տուածին տատիճանը՝ կարեսրութիւն չէ տուած այդ մանրաւմանութիւնն ու յարդարած է իր խճանկար յատակը։

Այդ երկրորդ եկեղեցին կրնար իր գոյութիւնը պահած ըլլալ մէկ գար, սկսելով՝ հաւանաբար՝ Սեպտիմոս Սեւերոսէն (193-211) և կամ Կարոկալայէն (211-217) ու տեած ըլլալ մինչեւ Դիոկղեալանոսի միծ հալածանքը, 303 թուին, երբ այս կայսորը քրիստոնէական եկեղեցիները հիմնայտակ կործանել հրամայեց։

Այստեղ կը վերջանայ Բեթղեհէմի եկեղեցիին ուսումնասիրութիւնը, որուն հեղինակը, ինչպէս ըսինք, մինչեւ Յուլիոս 24 կատարուած պեղումները աչքի առաջ ունեցած է։ Անէկ յետոյ քիչ ժամանակ մը ևս շարունակուեցան պեղումները ու մեր վանքի տեսչարանի քավի սեղանատան ներքեւ գտնուեցաւ յուստինիանոսեան եկեղեցիին արեւմտեան գուռններէն մէկուն բարաւորը։ Դարձեալ նոյն տեղը, քիչ մը զէպի արեւմտեած, երեան ելաւ ամբողջական սիւն մը, յարենման Ա. Ծննդեան տաճարի սիւներուն, որուն խորխուսը գտնուեցաւ մեր վանուց զանապանի զետնայտրկ սենեակին մէկ անկիւնը։

Պեղումները դադրած են ասմամագիս։ Եթէ շարունակուին անոնք, պիտի լուսարանեն, անաբարակոյս, տաճարի պատմութեան վերաբերեալ կարդ մը մութ խնդիրներ, որոնք յիշուեցան վերե, և հնախօսական տեսակետով յոյժ շահեկան յայտնութիւններ տակաւին պիտի բերեն մեղիւ։

Մ. Ե. Ե.



(*) Մեր հրատարակած Յատակագիծը, զոր պատրաստած է Հ. Վէնսան՝ յայտնի պաղեստինագէտ Դոմինիկեան վարդապետը, կը լուսարանէ ուսումնասիրութեանս մանրամանութիւնները։ Յատակագիծիս արտանկարութիւնը ըլլար է մեր Ծննդայարանի ուսանողներէն բարենորոշ Արշակ սարկաւագ Դալուստեան։

ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵՐԳԻՆ ԾԱԳՈՒՄԸ

ԵՒ ՆԱԽՆԱԽԱՆ ԱՐԱԲԻՒՐՆԵՐԸ

Ա.

Ետառ իրաւացի է այն խոսքը թէ «Քրիստոնէութիւնը ովկէան մըն է», որոն մէջ կը հսօբին հրկութեան և հելլէնականութեան զոյգ մէծ գետերը»։ զարմանալի չէ հետեւաբար անոր երաժշտութեան մէջ և ստեսնել այդ երկուքին հետքերը։

Յունական երաժշտութիւնը, նման լեզուին, զրեթէ տիեզերական գործած էր։ Անիկա տարածուած էր ամբողջ քաղաքակիրթ աշխարհին մէջ, երկու ուղղութեամբ։ մին կ'ընթանաբ Յունաստանէն դէպի իւտալիա, ևնթարկուելով բարքերու, զրականութեան և միւս արուեստներուն ընդհանուր շարժումին։ իսկ միւսը՝ հետեւելով նոյն ուղիին, անկիւն մը շինելէ յետոյ սակայն, կ'իրթար Փոքր Աստիա, խանուելու երրայցիներու աւանդական արուեստին։ Յունական և երրայցական երաժշտութեան այս միացման արդիւնքն եղաւ, արևմրտեան երկիրներու մէջ, երգի այն ձեւը զոր Միջին գործ Դրիզունան երգ կամ Plain-chant պիտի կոչէր։

Իսրայէլի պաշտամունքին մէջ երգն ու երաժշտութիւնը մնած տեղ զրաւեցին Դաւթի, Սողոմոնի և մասնաւորաբար Եղիի ատեն։ Երաժշտական այդ կազմակերպութեան պատմութեան ամփոփումը այսպէս կարելի է ընել։

Երբ Դաւթիթ գահ կը բարձրանայ՝ սըրբազան երաժշտութիւնը կը կազմակերպէ. այսինքն նուազածուներու և երգիչներու դաս մը կը հաստատէ, որոնք Տաճարին աւերումին պատճառաւ պահ մը դադրելէ յիտոյ։ Նէկմիի օրով, վերահաստատուեցան, ու մինչեւ Տաճարին երկրորդ աւերումը տեւեցին։

Առաջին խումբ մը կար բաղկացած երեք երաժշտականերէ — նման, Ասափ և Եթան։ Երկրորդին մէջ, տասնեւորս զե-

տացիներ կային, երեք խումբերու բաժնուած՝ իրենց զործածած նուազարաններուն համեմատ։ առաջին խումբը կը բաղկանար երեք զասապեաներէ, որոնք ծնծզայ նուազելով երգերն ու նուազները կը կառավարէին. երկրորդ խումբը՝ ուել նուազող ութ երաժշտներէ կը բաղկանար. և երրորդը՝ կիոր նուազողներէ։ Աւելի յետոյ, Դաւթիթ կատարելազործեց երաժշտական այս կազմակերպութիւնը, չորս հազար զետացիներ յատկացնելով անոր։ Երգիչներն ես, նման քահանաներուն, բաժնուած էին քսաննչորս զտակարգերու, իրենց զլույնն ունենալով Ասափի չորս, իզիթունի վեց, և նմանի տասննչորս որդիները, որոնք իրենց իշխանութեան տակ ունեին 288 ուսուցանող երաժշտներ։

Դաւթի և ապա Սողոմոնի հաստատած այս կազմակերպութիւնը առաւել կոմ նուազ փոփոխութեանց ենթարկուեցաւ իրենց կոապաչա յաջորդներուն ժամանուկ, բայց Եղեկիա և Յովակու բարեկերպիչ թազաւորներու օրով անիկա վերահաստատուեցաւ։ Ե. Դարուն (Բ. Ա.) Նէկմիի օրով Հրեաները կ'երգին ու կը նուազէին օրստ Դաւթի։

Քրիստոնէական գորաշչանի սկզբնաւորութեան Սինակոկիլ մեծապէս ողողուած էր յունական արուեստով։ Քրիստոսի կրօնը, նոխ և առաջ, երաժշտական կազմակերպութեան մէջ պիտի համակերպէր հրեական հին պաշտամունքին, որուն այնքան սերտիւ կապուած էր և որ բազմազարեան հնութիւն մ'ունէր իր ետին։

Արգարեւ, հարկաւոր է գիտնալ թէ Քրիստոնէական Եկեղեցին ի՞նչ վիճակի մէջ զտած է երրայցեցիներու սրբազան երաժշտութիւնը, և ի՞նչպէս զայն փոխակերպած։ Վաւերազրեր կը պակսին ճշգորէն և կատարելազակս օրոշելու մեկնակէտը (point de départ), քանի որ հին Սինակոկէն ոչ մէկ եղանակ հասած է մեզի. զասն զի աւրրիտական ամենահին երգերն, զորս զիտենք և որոնք պայմանագրական հշաններով ցոյց կուտան աւանդութեամբ հասած եղանակներուն թեքումներն ու փոփոխումները — այնքան հին չեն որ կարենանք ճշգործել Քրիստոնէական երգին փոխառութիւնները՝ բաւականաչափ ստուգութեամբ։ Սակայն, զիտենք մէծ կարեւո-

բութիւն ունեցող բազմաթիւ իրադարձիւններ։ Հրեայ ժողովուրդին կողմէ բնութիւնը ու արտեստը համարձակօրէն ի սպաս դրուած են պաշտամոնքին։ Խստամբեր ճգնաւորութեան մը մէջ չէ փնտռած անիշկա իր մխիթարութիւնը։ Երածշտութիւնը ձայնական է եղած և զորդիական։ Եթէ բովանդակ բնութիւնը պարտի օրհնել Ամենակալը, ինչո՞ւ ուրեմն մարդ չօրհնէր զԱյն իր ձայնին բովանդակ թափով ու նուագարաններուն երգովը։ Երրայական վաւերագրերը կը յայտնաբերեն ճոխ և փայլուն երածշտութիւն մը, նոյնիսկ սաղմոսներուն բանաստեղծութեան բարձրութեան վրայ։

Նոր կտակարանի վկայութեանց համաձայն, Յիսուս և իր աշակերտները ներկայ կը գտնուէին Տաճարի և Սինակոկներու պաշտամանց։ Կետեաբար անոնք եւս ամին ով այլըլուհասով և ովանանեասով պատասխանած են Ղետացիներու սաղմոսներութեանց և քոհեններու քարոզներուն։ Նազարէթի մէջ, ուր Տէրը բեմ կը հրաւիրուէր պաշտօնեացին կողմէ՝ կտարեկու այդ օրուան ընթերցուածը, իր ձեռքն ունենալով նսայեայ մարգարէութեան գալարը, կը սուուի թէ կարգացած է այնպէս ինչպէս եկեղեցւոյ պահած զրուցերգի (récitatif) գրութիւնը։

Առաջին հաղորդութեան խորհուրդին յիտոյ, աւետարաններու վկայութեամբ, իր աշակերտներով երգած է Ալելուիան, այսինքն Ճ՛մ եւ Ճ՛մ սաղմոսներուն կը ցուրդը, որուն իւրաքանչիւր տունը նուիրական եղանակի մը վրայ կ'երգէր ընտանիքին մեծը և միւս անդամները անոր կը պատասխանէին ալելուիաններով։

Հին մարգարէններու սովորութիւնն էր յանպատրաստից երգեր յօրինելով արտայայտել իրենց սրտին զեղումը։ արդարեւ, շատ հին անդամներ գրութիւն մը Յիսուսուի կը վերագրէ շարք մը երգերու հեղինակութիւնը, ըլլայ ընթերքի սկիզբը երգուած՝ ըլլայ յիտոյ, ուր Տէրը կը պատուիրէ աշակերտներուն երբեմն ձայնակցիլ և երբեմն ամէններով միայն պատասխանել իրեն։

Յիսուսով կը յայտնուէր առաջին երգիչը նոր հաւատքին։ և ծխական առաջին երգը տեղի կ'ունենար այդ առաջին պատարագին։ Յիսուսի, և նոյն իսկ կանոնական գրութեանց համաձայն, եկեղեցւոյ

երածշտական կեանքը առաջին Պատարագին սրբազործումով կը սկսի, ուր երգը Յիսուսի սրտէն իսկ կը բղիսի։

Կատարած է Յիսուս Հօր կամքը եւ երկրի վրայ թողած՝ հաւատացեալներու խմբակ մը։ Պօղոս, իր առաքելական զործունէութեան ամենաբռուն շրջանին, կը յորդորէր կողոսիոյ և Եփեսոսի քրիստոնեաները, որոնք սաղմոսներ, օրհնութիւններ եւ հոգեսոր երգեր կ'երգէին, երրեք չթերանալ այդ պարտականութեան մէջ։ Մտուցիւ, հաւատացեալներուն մէջ կային Սինակոկի երգեցողութեանց վարժ հրեաներ, որոնք իրենց այդ հանգամանքով ուսուցանողի դիրք կուտային իրենց անձին։

Մաղմոսներութիւնները, ցնծութեան աղաղակներու երրայական քանի մը բանածեերն (ալելուիա, ամէն, ովանանա) չե՞ն միայն փոխ առնուածներ խրայէլի պաշտամունքէն։ Հրէական և քրիստոնէական պաշտամանց ընթացքին իրարու համապատասխանող որոշ բնագրերու նոյն տեղուոյն մէջ ներկայութիւնը, ուանդութեանց շարունակութեամբ միայն կարելի է մեկնել։

Եւսերիոս, թերափիւաներու հրէական աղանդին մասին Փիլոնի գրութիւնը մէջ բերելով (թէեւ ընաւ իրաւունք չունինք քրիստոնեայ կարծելու զանոնք, քանի որ Փիլոնի նկարագրածը հիմնովին հրէական ոգւով տողորուած աղոնդ մըն է) ցոյց կուտայ անոնց երածշտութեան քրիստոնէական երգին հետ ունեցած նոյնութիւնը։ «... զորս ճշմարտազոյնս մի ըստ միոջէ աւանդէ այրն (Փիլոն) ի զիրս իւր, ըստ օրինակին որ պահի ցարդ առ մեզ միայն, վասն աքնութեան տօնի մեծի, վասն զիշերապաշտօնին և օրհնութեանց՝ որ ասին տո մեզ...» Եւ թէ զիշերդ ոմն համով եւ վայելչութեամբ զսողմոսս երգելով, և այլքըն լոփի ունին զնեն, և ի կատարած օրհնութեանց ամեններեան ձայնակցին...։ Այս օրհնութիւնները, և զանոնք երգելու կերպը մեզի աեղեկութիւն կուտան սաղմոսներութեանց վրայ։ այսինքն թէ՝ մէկը միոյնակ (solo) կ'երգէր և ապա խումբը կը պատասխանէր, ու Եւսերիոս կը վատահացընէ զմեղ թէ Քրիստոնէական եկեղեցւոյ մէջ ես, այսպէս կը կատարուէր սաղմոսներութիւնը։

Գալով Յունո-Հռոմէական երաժշտութեան, թէն ճշմարիտ է թէ Քրիստոնէական երգը քանի մը եղանակներ կը պարտի անոր, և սակայն, այս կամ այն կտորին օրոշադրութիւնը տակաւին անկարելի է : Քրիստոնէական երաժշտութիւնը ուրիշ աւելի կարեւը տարր մը կը պարտի յունական երաժշտութեան — կարգերու (mode) զրութիւնը — որոնց հիման վրայ պիտի բարձրանար քրիստոնէական երգին չենքը :

Ճիները, այսինքն նախաքրիստոնէական ըրջանի Յոյները, ունէին բազմաթիւ կարգեր, որոնք իրարմէ կը զանազանուէին ձայնամիջոցներու յորադրութեամբ : Երաժշտական երեք սեռ ծանօթ էր անոնց, Diatonique ը — երբ երաժշտութիւնը ընդհանրապէս ամբողջական ձայներով կը կատարուէր, cromaticque ը — երբ կիսաձայներու շարայարութեամբ կ'ընթանար եղանակը, և enharmonique ը — երբ երաժշտութիւնը կ'որդեգրէր քառորդ ձայներու զրութիւնը :

Կերպարէս ձայրայեղորէն հետաքրքրական են կտարուած մերձեցումները քրիստոնէական երաժշտութեան, մեզի հասած Գնոստիկեան երգերուն . որոնք տարրեր առնելով թէ՛ հեթանոսներէն եւ հրէութենէն, և թէ՛ կազմակերպուելու համբուն մէջ եղող քրիստոնէութենէն, չոտ հետաքրքրքական բաղդատութեան կէտ մը կ'ընձայէն մեզի : Զանոնք արդի մարդկութեան փոխանցող պապիրոսները (ոսմանք նախ քան Դ. դար), աւելի հին են քան իսրայէլեան երգին վկաններն, և ա՛յս պատճառու մեծ կարեւորութիւն ունին անոնք : Գնոստիկեանները այրութենքի հօթը ձայնաւորներով կ'երգէին, անոնցմէ իւրաքանչիւրին տալով մոգական նշանակութիւն մը . և նոյն ձայնաւորին վրայ նոյն ձայնանիշին կրկնութիւնը (téretisme) կառկառուն զիծերէն մին է այս երգերուն : Անիսոնհմութիւն պիտի ըլլար աւելի ճըշդրութեներ ընել այս երգերուն յատկանիշերուն մասին և վստահութեամբ խօսիլ փոխառութեանց նկատմամբ :

Այսպիսի հարուստ, ճախ և հեթանոսութեամբ պատուաստուած ժառանգութենէ մը, զր հրէութիւնը կը մատուցանէր, քրիստոնէութիւնը պարտ էր օգտուիլ և

նոր յատկանիշ մը տալ անոր, թէ՛ բանառտեղծութեան և թէ՛ երաժշտութեան մէջ, իր կատարած ընտրութեամբ : Քրիստոնէութիւնը կը ձգտէր, վերջապէս, աւելի պարզ արուեստ մը ստեղծել, մաքրելով և զտելով քնարերգութեան այն հոսանքը զոր Տաճար Ներմուծած էր արևելիան երեւակայութիւնը : Ծմբանելու համար զտումի այս զորձը, պէտք է նկատի ունենալ Քրիստոնէական բարոյականը — յստակօրէն յունետիս, քանի որ աստեղոր կեանքը գէշ և թունաւորուած կը համարէր և հետեւբար թշնամի՝ երաժշտական զգայասիրութեան — և ընկերային այս պայմանները, որոնց մէջ ապրեցան առաջին քրիստոնէանները : Կոստանդիանոսի կողմէ 313ին հրատարակուած Միլանի հրովարտակէն յետոյ միայն աղաւութիւն վայելեցին : Մինչեւ այդ, և յանախ այս թուականէն յետոյ ևս, հալածուելու արժանի աղանդ մը կը նկատուէին անոնք :

Քրիստոնէութեան կտարած առաջին մաքրագործումը եղաւ —, նուագորաններու արտաքսումը տատուածային պաշտամունքին : Մասնաւորաբար արհամարհուեցաւ բազոստական սիզելիններու սիրական սրինգը : Հոռմէական թատրոնին անհաւատուիլ և անսպասելի անկումը քրիստոնէից մէջ յառաջ բերու ճգնաւորական հակազդեցութիւնը մը, որով կ'արգիլուէր անոնց թատրոնը իր սարօք : «Քրիստոնեայ աղջկը, կ'ըսէ Ներոնիմոս, պէտք չունի զիտնալու թէ ի՞նչ է քնարը, սրինգը, և կամ թէ ինչ բանի կը զործածուին անոնք» : Նոյն իսկ Ս. Ամբրոսիոս, հայրը բոլոր եկեղեցական երաժիշտներուն, անէծք կը կարգայ բոլոր անոնց զէմ՝ որոնք քնոնը կամ տաւիզ կը նոռագեն փօխանակ փառարուութիւն երգելու Աստուծոյ : Կղեմէս Աղեքսանդրացի այս նուագորաններու ընդհանուր տարամերժումը այսպէս կը բացատրէ : «Նուագորան մը միայն հարկաւոր է — խօսքը — որ խազազութիւն կը բերէ Պէտք չունինք հին Պալտարիոնին, փողին, ծնծղային որոնք պատերազմիկներէն կը գործածուին» : Pédag. II, 4; Migne, Patrol. gr. VIII 443) : Եւսեբիոս ևս հակառակ է անոնց զործածութեանց : Ստկայն կղեմէս Աղեքսանդրացին (Բ. դար) և Եւսեբիոս՝ (Գ. դար) աւելի իրր աստուա-

ծարաններ կը խօսին քան թէ պատմիչ-ներ, ջանալով բացատրել այն իրողութիւնը որուն իսկական պատճառները կ'անդիտանան։ Արգարեւ, նուազարաններու արտաքաման պատճառն այն էր որ անոնց աղմկալից ձայները չէին յարմարեր տակաւին համեստ, իշխանութենէ չճանչցուած կրօնական խմբաւորումի մը, որմէ խոհեմութիւն միայն կը պահանջուէր այդ ատեն։ Դ. կամ Ե. զարերու սկիզբը նուազարաններու երգին հետ գործածութիւնը բացարձակապէս արգիլուեցաւ, և իբրև երաժշտութիւն, պաշտամանց ընթացքին, մի միայն մարդկային ձայնը կը թոյլաւարուէր։

Երկրորդ մերժումն էր կիսամայնային (chromatique) և քառորդ ձայնային (enharmonique) սեռերու կիրարկութիւնը եկեղեցական երաժշտութեան մէջ, իբրև արտայայտիչ հեթանոս մտայնութեան։ «Պարզ և պարկեցած ներդաշնակութիւններ միայն կրնան թոյլաւարուիլ, կ'ըսէ կղմէս Աղեքքսանդրացի, ու պէտք է զգուշանալ մեղկ և ցանկայարոյց դաշնակութիւններէ, որոնց յոյժ պաճուճեալ սահանքը մեղկ և քընքոյշ կեանքի կ'ուղղէ սիրտը, մինչ լուրջ եղանակները ժուժկալութիւն կը ներշնչեն և կ'արգիլեն անկարգ եւ ցոփ կեանքը։ Պէտք է, հետեւարար, ի բաց զնել կիսամայն և թեթև դաշնակութիւնները, որոնք կը գործածուին պալատականաց լիտի բազոսատօններու ատեն»։

ՊՍՍԿ ԱԲԴ. ԹՌԻՄԱՑԵԱՆ

«Մանջոնիի նաւական բանասեղծութիւնը ունի այնեան արտայայիչ եւ այնեան ազատ կը ոյրներ, ըրդումի միջոցին ա'յնեան շարժումներ, զզացումի եւ խօսուն պատկերներու այնպիսի նաւասութիւն մը, մեր սեղ եւ մելոմանդիկ մեծութեամբ եւ մեր այնքան ներմուծեն համեզ ազգումներ, կարգ մը բաներու բաշխութեամբ անիկա այնքան կը կապուի նոզիին բայուտ սպաւութիւններուն, տառապանքներուն, խոյաններուն, ինչպէս եւ յիշողականին մոզութեամբ, որ բնդիւս պիտի մնայ անցեազանցեի։ Բանասեղջին միջոցներուն պարզութիւնն է նոյն իսկ որ կը օնի անու նրամայի գորութիւնը»։



ՆՕԹ ԵՒ ՆԻՇՔ

Պաղարիւնի պակասն է ակներեւորէն որ պատճառ եղած է Դ. Վ. Դ. ի յատակ չըմբռնելու «Ոխոն»ի մէջ և Հացունիի գրքին մատենախօսականին առթիւն Վ. Պ. ի յայտնած զազափարները ի մասին հայերէն լեզուի և Հայ եկեղեցոյ ազգապահպատման գերին։ «Յուսաբեր»ի Հոկտ. 10 թիւին մէջ իր ստորագրած յօդուածը կարելի չէ արդարեւ ուրիշ կերպով մեկնել։

Խողիրը շատ պարզ էր սակա՞յն։ — Հ. Հացունի ըստած էր, «Մեր լեզուն միակ գործիքն է մեր ազգային պահպանութեան», իսկ ն. Վ. Պ. պատասխաններ էր, «Եկեղեւն միակ գործիքը չէ լեզուէն աւելի էական ազգակ մըն է մեզի համար՝ ազգային եկեղեցին։ այս է պատմութեան դասը»։

Ն. Վ. Պ. ի այսօքան վճիտ է ճիշդ գատումին ընդդիմաբանէ՝ զարմանալի է պարզապէս։ — Եթէ լեզուն է միակ միջոցը ազգապահպատման գործիքն է մարդկան ազգութիւնը ուրիշն երկար տարիներէ, զուցէ և զարերէ ի վեր հայերէնը կորպուցած թթախօս կեսարացիին՝ հայութեան այդ ոսկեհուռ կերպասին՝ անալլայլ ազգայնականութիւնը, նոյնական ուրիշ գաւառներու (Պոռւսա, Կուտինա, Պիլէճիկ, Խւայլն, Խւայլն) թթաքարքար և Սղերդի և այլ վայրերու քըլլագախօս հայոց՝ իրենց ազգութիւնը պահելը։ Դարձեալ, եթէ մեր մէջ եկեղեցին չէ լեզուէն աւելի էական ազգակ» մը չէ եղած այդ տեսակէտով, ինչպէս մեկնել հայ լեզուի և հայկական գրականութեան մէջ երբեմն այնքան բարգաւաճած լեհանայ զաղութիւն յանկարծ և ընդ միշտ կորսուիլը՝ իր ազգային եկեղեցիէն օտարանաւուէն անմիջապէս հուքը։ Արովնեառ այդ գաղտնի ներկայական կը կատարէ իր եկեղեցական պաշտամունքը, կը նաև արգեցէ ուրիշն այլ իսկ պատճառաւ չկատարել այսօր զիրենը հայութեան համար։ Ինչու համար կորսուեցան խապա՞՝ անցեալի զանազան գաղթաշարժերու միջոցին խառնույթ այլ և այլ կողմերը փոխադրուած բազմահազար հայերը, հակառակ այդ տեղերուն մէջ յայկական տողարան և զրական ձեռնարկութիւններ ունենալուն նոյնական մէջ անբաժան մէջ, անբաժան։ Հայ եկեղեցիէն Արովն հաւատալ, Դ. Վ. Պ. ի թէ պատմութեան վիայութեան։

Յետոյ, այնքան պատմական այս պարզ ճշշմարտութիւնը անտեսելու համար ինչ անզիտ ճարտարարանքներու անձնաւուր կը լինի Դ. Վ., մինչեւ կը ունեներու պատճառութեան և կը ունի փիլիսոփայութեան գրքեր խառնելով։ Առողեցներու համար մեզ, անբաժան։ Հայ եկեղեցիէն Արովն հաւատալ, Դ. Վ. Պ. թէ պատմութեան վիայութեան։

իր ցուցման քններուն, դիմոնալու համար թէ կրօնը, երբ ասուաւածպետական նկարագիր չունի և պետական չէ, արդեւք չէ ազգութեան բայց ն. վ. Պ. ի ներկայացուցած պարագան այդ չէ բնուալ Ալիբեկ Նիկողոսի խօսքը կ'ընէ և ոչ կրօնի. ու այդ երկու քը բոլորովին նոյնը չեն. զի Եկեղեցին կրօնական կեանքի կազմակերպեալ զրաւթիւնն է, առաջինը սկզբունքն է՝ իր վերացեալ և ընդհանուր իմացումին մէջ, երկրորդը՝ անոր գործադրութիւնը կամ կիրարկութիւնը, ու պարզ է թէ հանրական սկզբունքի մը կիրարկութիւնը աեղէ տեղի և ազգէ աղդ, նոյն իսկ երեսն միենոյն տեղույն և միենոյն ազգին մէջ կրնայ տարբերութիւններու տեղի տալ միշտայրի կամ պատմական պարագաներու հետու անքօթ. Թո՞ւ զ զայդ, ն. վ. Պ. «Եկեղեցի» բառն ալ իր ընդհանուր իմաստով չ'առներ, զի դիտէ թէ մէ այլապէս նոր կազմակերպութիւնը ունեցող ազգերու մէջ Եկեղեցին և արգելք չէ բնաւ ազգութեան, քանի որ տարրեր, զօր օրինակ կաթոլիկ և թողքարկան եկեղեցիներու պատկանող Անդղիացիք, Գերմանացիք, Ֆրանսացիք, ևն. Հաւասարապէս Գրանսացի ևն և գերմանացի և անզպիացին Այս մասին իր ըմբռումը ճշգելով կ'ըստ է անիկա, սկզբուէն աւելի է ական ազգակ մըն է մեզի նամաց ազգային Եկեղեցին, որով զսել կ'ուզէ պարզապէս, Եկեղեցին ուրիշ ազգերու համար ազգային ինքնութեան հանգէոց կրնայ այս կամ այն վերարերութիւնն ունենալ կամ ունեցած ըլլաւ. բայց մեր մէջ մեր Եկեղեցին ինքնային ազգային կեանքին ունեցուած քարտուղարի մէջ ճանչցուած կոչում կը ցուցուի Էմենի զարդիլը մինչ ամէն ոք զիտէ թէ Գորովիլ միէրիկի էր մեայն այդ յորդըումը: Եւ միայն այզպէս՝ այսինքն հաւածող ու չարգարար կառավարութենէն այդ վերջին անուան ներքեւ միայն ճանչցուած և իր այդ զնահատուած լիներուն համար չէր միթէ որ անոնք, ոչ միայն իրենց այլ նաև ամէնուած համար բարերախտութեամբ՝ գրեթէ զերձ մնացին 95ի կոտորածներէն: — Խօսք չունինք այս վերջին մեծ ազէտքին առթիւ իրենց ևս մեզի հաւասար կրած տառապանցին և նահատակութեան մասին: որ ճշմարիս են միայն: Խօսք չունինք զարձեալ Միջմարեանց միջոցու իրենց մէջ սկզբէն իսկ մշակուած, բայց մինչեւ զեր կէս զար առաջ թէնէ մը միայն յառաջացած և հայ կաթոլիկ մեծամասութիւնն միշտ խէրիս զիտուած չերմօրէն ազգային սպիտին համար, որուն ի տես ուրախ կրնանք լինիլ միշտ: Զմռնանք սակայն թէ այդ սպին ճնունդ է րուն իսկ այն համատառութեան, Հայաստաննեաց մայրենի և ազգային Եկեղեցին, որուն զերը կը ճնին միշտիւնը իր ազգէն անրաժան պահելու մէջ: Այս կացութիւնը կրնայ փոփոխութեան ենթարկութիւ, կ'ընդունինք, երբ ազգը օր մը բովանդակապէս ունենայ իր քարագան ինքնություն պետական կեանքը, երբ հայութեան ամենամեծ մասը խմբուի հայ պետութեան սահմաններուն մէջ, ու տարաշխարհի գաղութները իրաւապէս և քարյապէս կը ցորդուին անոր հետ աւելի սերտ կապերով կը կարծենք թէ այզպիսի պարագայի մը մէջ ալ, եթէ Եկեղեցին իրաց բնական բերում մօխ ինքնին ինչէ մեր մէջ ազգային գոյութեան զիմանը կը կուտանի իր զիրքէն, երկար աւեն պիտի պահնէ գործեալ աւելի քան այդ այժմ չելլէն և պաւանական օրթոսութիւններուն մէջ:

Գ. վ. Մ. իր յօգուածին զրեթէ կ'ուր կը նուիրէ հայ կաթոլիկներու կեանքին մէջ իր թէ միշտ ալ զոյութիւն ունեցած ազգային զգաւման և ոգեսրութեան տարփաղանքին, գեղեցին:

են իր խօսքերը երբ կ'ըսէ Հայ կաթոլիկը միշտ հայ ձնաւ, հայ մեռաւ... և հն. և քիչ մը զարը՝ և ամենազառն օրերուն իսկ՝ ան չփոխեց իր պաշտօնական անունը Էմենի կարուիլի... Գեղեցին, այս բայց բայց իր բարերէն, մինչեւ զեր կէս զար առաջ, սերունդներէ ի վեր բաժնուած՝ Մայրենի Եկեղեցին, օտարութեան մէջ մեռան ի սիմբուլ և բարութիւն ամառի համար իմացում այն հայերը օրոնք մէջ ամուսնութիւնը կը ամառի կաթոլիկութեան պաշտօնական այսինքն իր բարետական իրաւապարի մէջ ճանչնաքանակ կոչում կը ցուցուի Էմենի զարդիլը մինչ ամէն ոք զիտէ թէ Գորովիլ միէրիկի էր մեայն այդ յորդըումը: Եւ միայն այզպէս՝ այսինքն հաւածող ու չարգարար կառավարութենէն այդ վերջին անուան ներքեւ միայն ճանչցուած և իր այդ զնահատուած լիներուն համար չէր միթէ որ անոնք, ոչ միայն իրենց այլ նաև ամէնուած համար բարերախտութեամբ՝ գրեթէ զերձ մնացին 95ի կոտորածներէն: — Խօսք չունինք այս վերջին մեծ ազէտքին առթիւ իրենց ևս մեզի հաւասար կրած տառապանցին և նահատակութեան մասին: որ ճշմարիս են միայն: Խօսք չունինք զարձեալ Միջմարեանց միջոցու իրենց մէջ սկզբէն իսկ մշակուած, բայց մինչեւ զեր կէս զար առաջ թէնէ մը միայն յառաջացած և հայ կաթոլիկ մեծամասութիւնն միշտ խէրիս զիտուած չերմօրէն ազգային սպիտին համար, որուն ի տես ուրախ կրնանք լինիլ միշտ: Զմռնանք սակայն թէ այդ սպին ճնունդ է րուն իսկ այն համատառութեան, Հայաստաննեաց մայրենի և ազգային Եկեղեցին, որուն զերը կը ճնին միշտիւնը իր ազգէն անրաժան պահելու մէջ: Այս կացութիւնը մասնարկին ձրագիրը Միջմարեա, մեծ սերաստացին, իրեն հետ տարաւ ազգային Եկեղեցին միայն, ուր ճնած՝ մնած՝ կրթուած՝ օծուած էր և կարգ էր առած իրեն քահանայ և զարդարկած, իր այդ սպին էր որ երկար առեն զար մնաց իր կրինի Ռիստուրուն մէջ, որոնց ամենէն մեծարձէք գուստիները, Խնձրէնաւ, Զամշնաւ, Բագրատունի, Ալիշան, Գարագաշեան, Այտրնեան, Տաշեան, և այլն, Մայրենի Եկեղեցւոյ հանգէոց ամենէն լայնախոն և սիրալիր միտքերը եղան: Քարձեալ, Մայրենի Եկեղեցւոյ նմանագործութիւնը, անոր ձէսին, շարականներուն, Մայրացին, տօներուն և պաշտօնութիւնը մասերուն զորդագրութիւնն էր որ կաթոլիկ հայերուն մէջ արթուն պահեց ազգին զգացումը, Մայրենի Եկեղեցին:

պատկերը՝ աւելի քան որևէ այլ ինչ, և այն՝ նոյն իսկ իր ինչ ինչ կողմերով աղճատուած վիճակին մէջ իսկ աւելի կանուխ՝ Պէշիկթաշիւանի օրով սկսուած, Հասունի և նէքեան վարդապետով տիպարուած կաթոլիկներու ընդդիմութեան բաղիսած, և յետոյ վերջերը աւելի ընդարձակ չափով կատարուած ոգեհրութիւնը, Հայքինասիրական հոսանքներու միջոցաւ ամէն կոզմ և նոյն իսկ ազդին ամենէն խորթացած տարրերուն մէջ ճիւղաւորած, արդիւնքն էր ոչ թէ՝ այս կամ այն ներքործութեան, այլ Ազգ Սահմանադրութեան առաջին օրէն մշակուած եւ հետզհետէ միշտ աւելի արծարծուած այն յոյսերուն եւ մտատիպարին՝ որոնց վառարանը եղաւ միշտ մեր Մայրենի, այսինքն Հայաստանայց Եկեղեցին:



ՆԱՄԱԿ Ս. ԷջՄԻԱԾՆԵՆ

Ա. Երուաղիմի Ամենապահի Պատրիարք
Տ. ԹՈՐԴՈՄ ՄՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ
Վրիսոսաւանդ ողջոյն եղբայրական
և օրինութիւն Հայրապետական

Սիրելի լծակից Եղբայր Մեր,

Տարւոյս յուլիս 26 թուակիր գրութեամբ գումարել էիք Մեզ Ազգային մեծ բարերար՝ Տեար Կարապետ Մելքոնեանի մահը:

Բարեգործութիւնը ազգերի, մանաւանդ փոքր ազգերի կեանքում մեծ գեր է կատարել: Նա մեծ զեր կատարել ու կատարում է յատկապէս մեր կեանքում, որ աշխարհի ամէն կողմ ցիրուցան ընկած հայութեան բեկորներ ունինք, նիւթական և հոգեսոր բազմապիսի կարիքների մէջ և աջակցութեան կարօտ:

Գաղութահայութիւնը ընդհանուր տռամամբ՝ իր ազգային ինքնուրոյնութիւնը պահպանելու և ազգային մշակոյթը զարգացնելու համար՝ կարօտում է երեք խոչոր գործոնների հայ Եկեղեցու, հայ Պարոցի և հայ գրականութեան: Հայ Եկեղեցին ի մի է

խմբում և պատմական թանկարժէք աւանդներ տալիս նրան, հայ Պարոցը հայացի գաստիարակում և կրթումէ հայ մատաղ սերունդը՝ մարզելով նրա միտքն ու սիրու, իսկ հայ զրականութիւնը կեանքի ղեկավար սկզբունքներ տալիս նրան, և երեքը միասին զարգացնում են հայ մշակոյթը:

Այս հաստատութիւնները պահպանուել եւ պահպանում են գաղութահայ կեանքում բացառապէս բարեգործութեամբ: Ահա թէ ինչո՞ւ բարեգործութիւնը մեր կեանքում մեծ արժէք է ստացել և բարերարները գնահատուել ու մեծապէս փառարանուել են: Ազգային այս մեծ բարերարների շարքում պատռաւոր տեղ է բռնել Մելքոնեան տունը, որ իւր մեծագումար աւանդով և առատ նուիրատութեամբ թէ՛ Մայր Երկրում և թէ՛ գաղութայրերում խրախուսել է յիշատակուած երեք մեծ գործոնները, որով մեծապէս նպաստել եւ նորանուելու է հայ հոգեւոր կեանքի պահպանութեան, ազգային ինքնապիտակցութեան և մշակոյթի զարգացման կարեւոր գործին:

Ահա թէ ինչո՞ւ խորապէս վշտացած նեք Մոլգոնեան տան մեծ բարերարներից վերջինի մահուան գոյժն առնելով: Վիշտու մեծ է նաև այն պատճառով, որ ազգային մեծ բարերարները՝ աշնան տերեւների նման թափւում ու անէանում են հայ հորիզոնից՝ թողնելով մեր սրտերում միայն ապագայի յոյսը թէ՛ կրկին կուգայ գարունը եւ տերեւաթափ ծառերը կը հագնին թարմ կանաչ տերեւներ, ազատելով մեր սրտերը ձմռան ճնշիչ ու մահարեր շնչից և բերելով նոր կենդանարար չունչ:

Նոցա մահուան հանդէպ հայը մի զգացմունք ունի՝ յարգանքի և երախտակիտութեան զգացմունք, որ արտայայտում է եկեղեցական հրապարակային հոգեհանգստեան հանդէսով, որպիսին տեղի ունեցաւ Մեր տնօրինութեամբ Մայր Տաճարում Ս. Աստուածածնի Վերափոխման հանդիսաւոր Ս. Պատարագից յիշոյ: Նոցա մահուան հանդէպ ծանրանում է Մեզ վրայ աղօթելու և օրհնելու պարտականութիւն: Աղօթում եմ Յարուցեալ Փրկչին, որ նորոգ հանգուցեալին իր միսիթարիչ տեսութեան արժանացնէ: Մաղթում

ևմ կենսատու Փրկչին, որ հանգուցեալի
մերձաւորներին երկար ու խաղաղաւէտ
կեանք պարզեէ: Մաղթում ևմ Պարզեա-
տու Փրկչին, որ նոր բարերար և մեծա-
գործ հոգիներ պարզեէ հայ ժողովրդին
հանգուցեալի շաւզավ ընթացող ի փառս
եկեղեցւոյ եւ ի միսիթարութիւն Մեր եւ
համայն հայութեան:

Եզրայի ական ջերմ սիրոյ ողջոյններով

Unopurwar

ԽՈՐԵՎ. Ա.

Կարուղիկոս Ամենայն Հայոց

P. 1041.

30 *Ognisnuh* 1934 p.,

U. Եղիշածին



Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԱՐԱՐԱՏԻ ՀՈՒԹԵՐ

Անցեալ Հոկտեմբեր ամսուան ընթացքին Ա-
Առաջայ Տիուե Ժողովը ի Նիստ գումարուե-
ցաւ իրեւ վարչական մարմին ութը անգամներ
խէ իրեւ Կրօնական Անհան երեք անգամ
և այսպէս Առաջամանակ Խորհուրդը երկու ան-
գամ իրաքանչիւրը զրագելով իւ իրաւասու-
թեան պատկանած խնդիրներով:

● ԲՀ. 1 Հակո. — Խաչվերացի Մեռելոցին
առթիւ և պատարագը մատուցուեցաւ Ս. Փրկչի
մատրան մէջ. քարոզեց Տ. Նորայր վրդ. բացա-
տրեց թէ քրիստոնէին աննահանջելի պարա-
կանութիւնն է ա'յնպէս աղքիլ, որ երկրաւոր
կեանքը պատրաստութիւնը ըլլայ յաւիտենա-
կան կեանքին: Ցաւարտ և պատարագի Հոգե-
հանգստեան պաշտօն կատարուեցաւ Ս. Փրկչի
ազգային գերեզմանատան մէջ:

❸ Գլ. 2 Հոկտ. — Վերաբացուեցան Ա. Աթոռոյա ինձայրանն և ժառանգաւորացը, ինչպէս

նաև Ա. Թարգմանչաց ազգային երկսեռ պար-
ժարանը. այս տարի, առաջին երկու քին ուսուց-
չական կազմին վրայ աւելցան Պրն. Շ. Գեր-
ովէրեան իմաստասիրութեան և արուեստներու
և Պրն. Ց. Օշական Հայերէնի և ազգային ու
օսար գրականութեան ճիշդերուն համար:

❸ ԵՀ. 4 Հոկտ. — Հեռազրաւ լուր ստացուած
ըլլալով որ վաղը Ս. Պատրիարք Հայքը՝ որ շուրջ
երկու ամիսներէ ի վեր Եւրոպա կը դանուէր ա-
ռաջական գարմանումի համար, Հայքա պիտի
ժամանէ, լուսաբարապետ Տ. Մեծօրոգ Արքազան
ընկերակցութեամբ վանուց աւագ Բարգման
Տ. Հայքի վարդապետի և քարտուղար Գրեն. կ.
Հինգի անի, զիմաւորութեան համար Նոյն քա-
ղաքը մեկնեցաւ:

❸ Արքա հ Հակոս. — Եթե կոյի եան ուշ տառեն Ա. Պատրիարք Հայոցը երուսաղմէն հասաւ, վանքին մեծ դրան աջին հաւաքուած էին միաբանութիւնը, աշակերտք ինչպէս նաև ժողովրդեան մեծ բազմութիւնն էր. «որոնք ցնծութեամբ ողջունեցին Ն. Ամենազարդարութեան ժամանումը և շրաշափառութ. Պատրիարքը առաջնորդուեցաւ Մայր-Տաճար, ուր Ա. Գլխապետին առջեւ իր ուխտն ընկելէ և աւագ սեղանին առջեւ ազօթելէ ետք օրհնեց ներկայ ժողովարքը և անոնց հաղորդեց երոպայի հայոց ողջոյնները: Ապա կրկին երգեցողութեամբ առաջնորդուեցաւ Պատրիարքարքանի դահլիճը, ուր Տ. Ամբատ Արքաղան, որ Ն. Ամենազարդարութեան մեկնուանին առթիւ հիւանդութեան առաջին տափնապներուն մէջ կը գտնուէք. այժմ զգալապէս ապաքինած՝ ողեւորւած ուղերձով մը բարիգալուատ մաղթեց: Պատրիարք Հայոցը իր ուրախութիւնը յայտնեց միաբանութեան և մասնաւորապէս Ամբատ Արքաղանի առաջնորդեան և իր հեռաւորութեան առեն վանական գործերուն կատարած բարեւոք ընթացքին համար:

❸ Ծր., 6 Հակոս. — Ա. Պատրիարք Տօր այցելեց Մարտինիներուն նոր մեծատորը, ընկերակցութեամբ քահանայի մը և աշխարհականի մը:

● Կիբը 7 Հակոս. — Ա. պատարացը մատուցուեցաւ Ա. Յակոբյաց Մայր Տաճարին մէջ, քառազին էր 8. Տիրան վրդ. խօսելով Խաչին խորհուրդին մասին ծանրացաւ առառապանքին իրականութեանը վրայ և ներկայացուց զայն որպէս միջոց բարձրագոյն կատարելութեան վեանական:

— Երեկոյեան Պատրիարքաթանի մեծ գահ-
լիքն մէջ Ս. Պատրիարք Հայըլը. իր Եւրոպացէն
դարձին առթիւ սարքեց թէյասեղան մը որուն,
ներկայ զանուեցան միաբանութիւնը, սարկա-
ւագունք և բոլոր պաշտօնիաները Ս. Պատրի-
արք Հայըլը նախ չնորդակալութիւն յայտնեց իր
շուրջ երկամսեաց բացակայութեան միջոցին
վանական գործերու բնականոն և բարեսք ըն-
թանալուն համար, միակ դէպքը որուն մասին
ցաւով արտայայտուեցաւ ն. Արքազնութիւնը
Վերափախման տանակատարութեանց առթիւ Ս.
Կայուն գերեզմանին եկեղեցին մէջ մեր և ա-
ռորւց միջին տեղի ունեցած ախուր միջադէպն

էր, որ արգեն կարգազրուած էր համաձայնութեամբ և յոյս յայտնեց որ չկրկնուին այդպիսի դէպքեր որպէս պատուարեր չեն ոչ միայն մեր աշդին այլ նաև այս բազմազան կրօններուն կեղծրուին մէջ կը վասն մեր քրիստոնէական համարախին Ազա ներկայացնուց եւ բոռպայի հայոց և մասնաւորաբար ֆրանսահայ ազգային և կրօնական վիճակը և շեշտեց հոգեւորականութեան պակասը և Ս. Աթոռոյ պարտականութիւնը առ այդ:

● Դէ. 9 Հոկտ. — Ս. Պատրիարքը: աւագ թարգման Տ. Հայրի վարդապետի եւ զիւանապետ Պ. Նուրեմբենի ընկերակցութեամբ այցելեց Եգիպտական հիւսառասոսին, Ն. Վ. Յուտաս թագառորի գահակարութեան տարեդարձին աթիւ:

● Դէ. 10 Հոկտ. — Հեռագիր ստացնեցաւ Մարտէյի Առաջնորդարանէն, որ կը գումէք Տ. Գրիգորի Սրբազան Պալաքեանի յանկարծական մահը:

● Եշ. 11 Հոկտ. — Ս. Պատրիարքը ցաւակցական այցելութիւն տուաւ ֆրանսական հիւսառասարան, արտաքին գործոց նախարար Պ. Պարմուի եղերական մահուան համար:

● Ուրբ. 12 Հոկտ. — Կէսօրէ եաք Ս. Պատրիարք եափա գնաց յայցելութիւն Տ. Հայկացուն վրդ. ի որ տիկարութեան պատճառաւ անդույոց ֆրանսական հիւեանդ անսոցը բոխազդրուած էր:

— Վազուան Ս. Գէորգայ տօնին առթիւ իրաւական սովորութեամբ նախատօնակը կատարուեցաւ կատիներու Ս. Գէորգ եկեղեցիին մէջ:

● Եր. 13 Հոկտ. — Ս. Յակոբայ Մայր Տաճարին մէջ առաւ ժամերգութիւնը պաշտօնելեց եաքը, միայնուութիւնը թափօրոգ գնաց կատիներու եկեղեցին մատուցանելու և պատարազը, քարոզեց Տ. Զգօն վրդ. և Մեծամաց Քրիստոնէութիւնում իմուսն իմաստուով պիտի կարենայ տոկալ և յաղթել աշխարհի:

— Ռէմէքի մէջ ևս. որուն եկեղեցին նույիրուած է Սրբոյն Գէորգայ զօրավարի, ի ներկայութեան բարեպաշտ ու խատագնացներու պատարազեց և քարոզեց Տ. Գէորգ վրդ. ուսւրին կեանքէն թելագրական կէտեր վեր առնելով քրիստոնէական անձնաւիրութեան և բարեպաշտութեան համար:

— Ասորիներու եպիսկոպոսը, Քեր. Տ. Գարիէլ Սրբազան, իր վախանորդին հետ այցելեց Ս. Պատրիարքին, անոր Եւրոպայէն զաքին առթիւ:

— Երեկոյեան, «Համաշաբառ» ի հանգէսով միաբանութիւնը, գլխաւորութեամբ Ս. Պատրիարք Հօր, մուտ գործեց ի Ս. Յարութիւն, ուր պաշտօնեցաւ նաև երեկոյեան ժամերգութիւնը:

● Կիր. 14 Հոկտ. — Վարդապայ Խաչի տօնին առթիւ, առաւատեան ժամերգութիւնն վերջ, որ պաշտօնեցաւ Ս. Յարութեան մեր վերասան մէջ, հանգիստոր և պատարազը մատուցուեցաւ Քրիստոսի Գերեզմանին վրայ, ժամարարն

էր Տ. Մկրտիչ Սրբազան, քարոզեց Ս. Պատրիարքը, որ անդրադառնալով օրուան տօնին խորհուրդին, նկատի առաւ անոր աւանդական, պատմական ու բարոյական տեսակէաները ներկայացուց զայն իրեն ազգային խաչին, ազգին անմեռ յայտին տօնը:

— Այսօր ևս ի մէտէ մատուցուեցաւ հանգիստոր և պատարազ, ուր կրկն քարոզեց Տ. Մինչ վրդ. օրնուեցան և բաժնուեցան մատաղցուներ, նույիրուած տեղացի բարեպաշտ ազգային յիւնիներ:

● Բէ. 15 Հոկտ. — Յանուն Ս. Պատրիարք Հօր, Տ. Մկրտիչ Սրբազան, ընկերակցութեամբ Տիուն Տ. Խորէն վրդ. ի եւ աւագ թարգման Տ. Հայրիկ վրդ. ի ներկայ գանուեցաւ Ս. Յարութեան տաճարին մէջ ն. Վ. Անրովիս ողբացեալ Աղեքանդր թագաւորին հոգւոյն ի հանգիստ յիւն ծէսով կատարուած արարողութեան:

● Դէ. 16 Հոկտ. — Իրազի նախին առաջնորդ Տ. Ռուբէն նզու, Մանասեան հոս ժամանեց, սպասելու համար հայրապետական նոր հրամաններու:

● Եշ. 18 Հոկտ. — Տ. Հայկացուն վրդ. Արքահամեան, որ շուրջ երեք ամիսներէ ի վեր կը վարէք Յանզէ մեր վանքին առամեայ Տիուն թիւնը՝ ի տեղի Տ. ներսէ վրդ. Թորոսեանին, որ երեք ամսուան արձակուրդով կ. Պոլիս էր գացած իր քրոջ մօտ. այսօր վերագարձաւ, Ս. Աթոռոյ մէջ ունեցած իր պաշտօնները վերատանելու Արքաի ենք. ուր Տ. Հայկացուն վրդ. կարծ ժամանակամիջոցի մէջ ցոյց տուաւ արթենութիւն և կորով տեղույն գործերը վարելու տեսակտով, և սիրուեցաւ տեղույն հասարակութենքն:

● Կիր. 21 Հոկտ. — Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան մէջ պատարազի մէջոցին քարոզեց Տ. Եղիշէ վրդ. և ու ոչ յիսրայիլի այս չաւատ գտիք (Դէ. Է. 9) բնարանին վրայ, բացարոց թէ Հառվամյեցի Հարիւրապետին հաւատքին գերազանցութիւնը Յիսուսի անձին նըրկատմամբ անոր ունեցած անվերապան և ինքնարերական զստանութեանը մէջ է, ինչ որ իսրայիլի մէջ ոչ ոք մինչեւ այն տաեն ունեցած էր, և ինչ որ պէտք է լինի բոլոր քրիստոնէից հաւատքին կանոնը:

● Դէ. 21 Հոկտ. — Ս. Պատրիարք Հօր այցելեց Ֆրանսական Հիւսառասարանի մէջ հայեցած Պ. Պատրիարքին, ու, ի բացակայութեան քարոզեց:

● Կիր. 22 Հոկտ. — Սպանիական նոր հիւսառատական առաջնորդին առաջնորդութիւնը մէջ է, ինչ որ իսրայիլի մէջ ոչ ոք մինչեւ այն տաեն ունեցած էր, և ինչ որ պէտք է լինի բոլոր քրիստոնէից հաւատքին կանոնը:

● Կիր. 23 Հոկտ. — Սպանիական նոր հիւսառատական առաջնորդին առաջնորդութիւնը մէջ է, ինչ որ իսրայիլի մէջ է այս պատրիարքի գամբարանին բացանան առթիւ, իսկ էկու օրէ վերջ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց գործեան գրական մրցանակի պարզաբանութիւնը, անոնց նկարազրութիւնը առնել այս թիւին ուրիշ մէկ էջին վրայ:

S I C U R O H U R**ՀԱՆԳԻՍ****Տ. ԳՐԻԳՈՐԻԱՄ ԵՊԻՍԿ. ՊՈ.Լ. Ա.ՔԵ. Ա.Ն Ի****(1873-1934)**

